

# ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարիատ բոլոր յերկրների, սրացի և

Ա.


## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հ. Ա. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Բ

## ԿԱՆՈՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ, ԱՐՁԵՍՈԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ, ԿՈՌՊԵՐՈՒԹԻՎ,  
ՀՐՄՈՋԱՐԿԵՐԻ, ԿՈԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԶԵՐՆԱՐ-  
ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԹՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ



5 OCT 2011

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԻՒՎԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարիատ բոլեր յերկրթերի, միացե՛ք

902.5

N-25

Ա

Ա

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԻՒՎԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1008  
34465


Բ

ԿԱՆՈՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ, ԱՐՀԵՍՑԱԿՑԱԿԱՆ ՑԵՎ ԿՈՂՊԵՐԱՏԻՎ  
ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԶԵՌՆԱՐ  
ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԽԻՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՏԵՂՄԱՆ

1932 թ.



Ա.

ԿԱՆՈՆԱԳՐԱԿԹՅՈՒՆ

ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԻՄՎԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

(Հաստատված է ՀՍԽՀ Կենտրոնական ժողովության կողմից,  
1932 թ. ապրիլի 23-ին)

I ՄԱՍ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. ՀՍԽՀ Պետական Միասնական Արխիվը դանում է ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին առընթեր։ Պետական արխիվային Փոնդի վարույթը և ընդհանրապես Խորհրդային Հայաստանի բովանդակ արխիվային գործի ղեկավարությունը պատկանում է ՀՍԽՀ Կենտրոնական Արխիվային Վարչությանը (Կ.Ա.Վ.—ԿԱՎ.)։ Վորը գործառնում է թե՛ անմիջականորեն և թե՛ իրեն յենթակա արխիվային մարմինների միջոցով։

2. Արխիվային այն նյութերը, վարոնք գործեցէլ են ՀՍԽՀ սահմաններում գործող միութենական Հիմնարկների, ձեռնարկությունների ու կազմակերպությունների գործակարությամբ կամ դասվել են միութենական նշանակություն ունեցող նյութերի շարքին, դանում են ՀՍԽՀ ԿԱՎ-ի անմիջական ուսության և ԽՍՀՄ Կենտրոնական Արխիվային Վարչության ընդհանուր հակողության ներքո։

3. Կ.Ա.Վ.—ի նողատակն և տկանիլ ոժանդակել խորհրդային իշխանության ընդհանուր քաղաքականությանը, այլև ընթացիկ ձեռնարկումներին՝ ժամանակին և լիովին գործակրելու այն բոլոր արխիվային նյութերը, վորոնք անհրաժեշտ են ժողովրդական անտեսության սոցիալիստական վերակառուցման, կուլտուրական հեղափոխության, արտաքին և ներքին հակառակության դիմացայրելու համար։

4. Արխիվային նյութերի հավաքման, մշակման և ոգտագործ-

Ծանոթություն .—Արխիվային ֆոնդ և համարվում արախիվային նյութերի այն ամբողջությունը, վորը միացնում է բոլոր արխիվային նյութերը, վորոնք գոյացել են վորոշ հիմնարկության, կազմակերպության և անձանց գործունեցության ընթացքում .

բ) Նախահեղտափոխական ամբողջ ժամանակաշրջանի, ՀՍԽՀ տերիտորիայի վրա գոյություն ունեցած պետական հիմնարկների, ձեռնարկությունների, կազմակերպությունների և սրանց արտասահմանայն ներկայացուցչությունների, գործակալությունների և բաժանմունքների, նմանապես ազգայնացված բոլոր արդյունաբերական, առևտնական, վարկային, ապահովագրական և այլ հաստատությունների ու ձեռնարկությունների արխիվային ֆոնդերը .

գ) Ժամանակակիցը կառավարության, Անդրկովկասյան Կոմիսարիատի և Սեյմի, ինչպես և նախախորհուրդային Հայաստանի բոլոր հականեղութիւնական կառավարությունների ու ամեն կարգի և տեսակի հիմնարկությունների, ձեռնարկությունների ու կազմակերպությունների արխիվները .

դ) ՀՍԽՀ սահմաններում գտնվող իորդելային այլ հանրապետությունների քաղաքական, տնտեսական և այլ մարմինների արխիվային նյութերը չեն մըտնում . ՀՍԽՀ Պետական Միասնական Արխիվային ֆոնդի մեջ :

6. ՀՍԽՀ սահմաններում գտնվող արժմիտւնական կազմակերպությունների արխիվային նյութերը սանցնում են Պետական Միասնական Արխիվային ֆոնդին՝ ՀՍԽՀ-ի և ԿԵՎ-ի համաձայնությամբ և այն զեկավար կանոններով, վորոնք սահմանվում են միութենական համապատասխան մարմինների կողմից :

7. ՀՍԽՀ Պետական Միասնական Արխիվային ֆոնդի մեջ մըտնում են .

ա) ՀՍԽՀ սահմաններում հեղափոխական ժամանակաշրջանի լուծարքի յնթարկված կամ վերացված պետական և հասարակական հիմնարկությունների (արհեստակացական, կոոպերատիվ, գիտական և այլ), նաև անտեսական ձեռնարկությունների ու կազմակերպությունների, այլև ՀՍԽՀ սահմաններից դուրս յեղած նրանց գործակալությունների ու ներկայացուցիչների արխիվային ֆոնդերը . նմանապես ներկայումս գոյություն ունեցող, նաև վերակազմված պետական ու հասարակական հիմնարկների, ձեռնարկությունների ու կազմակերպությունների, ինչպես և նրանց արտասահման ներկայացուցիչների ու գործակալությունների գործակալությունների ավարտված գրադրությամբ ավարտված գրադրությունները, ձեռագրային և այլ նյութերը :

բազուրկ, լքյալ, գրավված և այլ ձեռագրերն ու նման նյութերը՝ վրոնք ունեն արխիվային արժեք:

զ) գործավարությամբ ավարտված ձեռագրային և այլ նյութերը, ՀՍԽՀ սահմաններում գտնվող արդյունաբերական, խորհուտեսական, կոլտնտեսական, վարդակային, առևտրական, արանսպորտային ձեռնարկությունների, կոնցեսիոն և պետական կապիտալի մասնակցությամբ գործող ձեռնարկությունների ձեռագրային նյութերը, նաև այն գրավոր, դժգորային և այլ նյութերը, վրոնք վերաբերում են չենքերի կառուցվածքներին, տեխնիկական սարքավորմանը, հետախուզական աշխատանքներին ու բանվորական ուժի ողտագործմանը.

է) Նախահեղափոխական ու հեղափոխական շրջանների ֆոտոնկարների և կինո-ֆիլմների նեղատիվները, վորոնք ունեն պատմահեղափոխական նշանակություն, նաև այն, վոր չեն թույլատրել սահմանված կարգով ցուցադրելու և հրատարակելու համար, իսկ նեղատիվների կորսորի գեղգում՝ նրանց պողիտիվները:

Ծանոթություն 1.— Ֆոտո և կինո նյութերի հանձնման պարտականությունները տարածվում են նեղատիվ պատրաստող և ողտագործող բոլոր ձեռնարկությունների ու անձերի վրա:

Ծանոթություն 2.— Ֆոտո և կինո նյութերի հանձնման պայմանները նախատեսվում են հատուկ հրահանուվ, վոր հրատարակում և ՀՍԽՀ կենտրոնական Արխիվային վարչությունը՝ կուսադորիմատի և Բանդյուզտեսչության ֆողկումատի հետ միասին, պահպանելով հեղինակի իրավունքը որպեսով սահմանված ժամանակի ընթացքում:

ը) Նկարագրդ տպագիր, դրչադիր և այլ նյութերը, վորոնք հրատարակվել են մասսայական աղիտացիայի ու պրոպագանդի նպատակով, այն և՝ հեղափոխական ու հականեղափոխական պլանները, ուղարկերը՝ հասարակական վայրելություններու կամ տարածելու համար, թուուցիկները, թերթիկները, կոչերը և նման նյութերը, վորոնք այս կամ այն պատճառով գտնը վում են ՀՍԽՀ սահմաններում գործող պետական հիմնարկների անորինության ներքո, բացի հեղափոխական թանգարանից և պետական հիմնական գրադահետաներից:

թ) Մամուլի որդաններում գոյացած ձեռագրերի և լրագրերի, ժուռանալների, ժողովածուների կամ պեկաների արխիվները, յրագրերի, ժուռանալների, ժողովածուների, խմբագրությունների և պետական ու հասարակական միջոցներով պահպող կամ պետական կամ կալիտակի մասնակցությամբ, գործող հրատարակությունների արխիվները, նաև նախահեղափոխական շրջանի մամուլի բոլոր որգանների, հրատարակությունների նման կարգի արխիվները.

ժ) Գրական, գիտական և այլ յերկերի, պարբերական և վոչպարբերական մամուլում լույս տեսած հողվածների, ինչորմացին հաղորդագրությունների ձևագրերը, ինչպես և նկարագրությունները, վորոնց տպագրությունն այս կամ այն պատճառով արգելված և յեղեւ:

ի) Ամեն կարգի տպագիր նյութերը, վորոնք հնության կամ իդեոլոգիական անհարազատության պատճառով մեկուսացվել են զբաղարաններից և գրադահետաներից, ընթացիկ սպիտակ մամուլ ու հրատարակությունները, այլև լուծարքի յննիւարկվող հիմնարկություններին և կազմակերպություններին պատճանող տպագիր հրատարակությունները և այլն:

8. Խորհրդային ժամանակաշրջանի հիմնարկներին, կաղմակերպություններին և ձեռնարկություններին պատկանող վերահիշյալ բոլոր նյութերն անցնում են ՀՍԽՀ Պետական Միանալիք Արխիվային Փոնդին՝ այս կանոնադրությամբ սահմանված սկզբունքների համաձայն:

9. Մասնավոր անձններ պարտավոր են հաշվառման համար ներկայացնել ՀՍԽՀ կենտրոնական Արխիվային Վարչությանը իրենց պատկանող կուլտուրապատմական ու քաղաքական նշանակություն և ընդհանրապես արխիվային բնույթ ունեցող նյութերը, և պատասխանատու յեն այդ նյութերի անձնումների ու պատճառվ վեճակի համար:

Մասնավոր անձանց մոտ յեղած, բայց պետական ու հասարակական հիմնարկներից բղխող արխիվային նյութերն ու վայրերը պետք են հանձնվեն պետական արխիվային Փոնդին, բացառությամբ այն փաստագրերի, վորոնք պետական հիմնարկների կողմից արված են ի հաստատություն մասնավոր անձանց պատկանող իրավունքների:

10. ՀՍԽՀ Կենտրոնական Արխիվային Վարչության տեղական մարմիններն են համարվում շրջանային և տունծնակի արխիվները, վորոնք գործում են այս կանոնադրությամբ նախատեսված հիմունքներով։

11. Նախահեղափոխական ու հեղափոխական ժամանակաշրջանների գերազույն ու կենտրոնական պետական հիմարիների, նաև հասարակական կազմակերպությունների (կոոպերատիվ, գիտական և այլն) կենտրոնական մարմինների արխիվային նյութերը կենտրոնացվում են ՀՍԽՀ Կենտրոնական Արխիվային Վարչության անմիջական տնօրինության տակ, իսկ մեացյալ արխիվային նյութերն ըստ իրենց տեղերի կենտրոնացվում են համապատասխան վրձնային արխիվներում։

Ծանոթություն. — Եջմիածնի, ինչպես և կոնսիստորիաների բոլոր արխիվները յևնթակա յեն «կեն»-ի անմիջական անորինությամբ։

12. ՀՍԽՀ կենտրոնական Արխիվային Վարչությունն իրավունք ունի շրջանային արխիվներից տեղափոխել կենտրոնական Արխիվ ըստ իր հայեցողության պետական-քաղաքական կարեոր նշանակություն ունեցող բոլոր անհրաժեշտ արխիվային նյութերը։

ԿԵՎ-ը կարող է, համաձայնության դալով ՀՍԽՀ և ԽՍՀՄ շահագրղութած գերատեսչությունների և հասարակական կազմակերպությունների կենտրոնական մարմինների հետ, շեղվել ներկա հոգվածով սահմանված՝ արխիվային նյութերը տեղական արխիվային մարմինների միջև բաշխելու՝ ընդհանուր կարգից, յեթե այդ պահանջում են հիշյալ գերատեսչությունների տեղական մարմինների գործունեյության շահերը։

13. ՀՍԽՀ կենտրոնական Արխիվային Վարչության անմիջական սնորինության ներքո յեղած արխիվային նյութերը կենտրոնացվում են հետեւյալ կարգով։ Նախահեղափոխական արխիվային նյութերը կենտրոնական Պատմական Արխիվում, իսկ հետեղափոխական արխիվային նյութերը Հոկտեմբերյան Հեղափոխության կենտրոնական Արխիվում։ այդ արխիվային նյութերի պատմական և հեղափոխական բաժանման ժամանակակետը համարվում է 1917 թ. հունվար ամսի 1-ը։

Ծանոթություն. — ԿԵՎ-ին կից կազմակերպվում են նաև կենտրոֆիլմերի և նկարագրերի հատուկ բաժին։

14. ՀՍԽՀ պետական արխիվային Փոնդն՝ արխիվային նյութերի ներքին բովանդակության համեմատ՝ բաժանվում են սեկցիաների, վորոնց իրավասության և գործունեյության շրջանակը վորոշվում և հատուկ կանոններով։

Ծանոթություն. — Արխիվապահեստում կազմվում են հատուկ գաղտնի բաժին՝ գաղտնի բնույթ ունեցող նյութերը պահելու համար։

15. ՀՍԽՀ կենտրոնական Արխիվին կից գոյություն ունի պատմական և արխիվային տեղեկատու գրադարան, վորտեղ կենտրոնացվում են պատմագրական-արխիվային ուսումնասիրությունների և ընդհանրապես արխիվային նյութերի գիտական ու գործնական ոգտագործման համար անհրաժեշտ ամեն տեսակի գիտական և տեղեկատու հրատարակությունները, որենքները, կառավարական տեղեկադրերը, պաշտոնական հրատարակությունները և այլն։

Տեղական արխիվներին կից նույնակա կազմվում են համապատասխան արխիվային ոժանդակ գրադարաններ։ Բացի գրադարանային նախնական Փոնդից և ընթացիկ գնումներից, արխիվի գրադարանը լրացվում է պարտադիր կարգով սահցվող՝

ա) գրադարանից — բոլոր հրատարակությունները.  
բ) սպիտակ մամուլը.

գ) 7-րդ հոդվածի «ի» կետում նշված հրատարակությունները։

16. ՀՍԽՀ պետական արխիվային Փոնդի նյութերի ընդորինակումը և տարածումը, նաև հրատարակչական նպատակներով պետական, հասարակական հիմնարկությունների ու ձեռնարկությունների և մասնավոր անձանց կողմից այդ նյութերի ողտադրումը կարող է կատարվել միայն կենտրոնական Արխիվային Վարչության սահմանած կարգով։ շահադրգույթած գերատեսչության հիման վրա։

17. Բոլոր հիմնարկները, կազմակերպություններն ու ձեռնարկություններն ունեն իրենց արխիվները, վորոնց գործերի կանոնավոր ու ապահով պահպանման համար պատասխանատու յեն համապատասխան հիմնարկների արխիվարիտունները, իսկ արխիվարիտունները չկնելու դեպքում՝ պաշտոնի համատեղության կարգով՝ դիվանի աշխատակիցներից մեկը, վոր արխիվալարտկան գործերում յենթակա յև կենտրոնական Արխիվային Վարչության։

Այդ արխիվներն առանց Կենտրոնական Արխիվային Վարչության գիտության և թույլտվության իրավունք չունեն իրենց արխիվային գործերն ուսարել, վոչնչացնել կամ այլ հիմնարկներին հանձնել:

18. ՀՍԽՀ պետական արխիվային Փոնդ Բոնող նյութերի գիտական արժեքը վրացելու, նաև շահագրավաճ դերատեսչությունների հետ միասին նույն արխիվային նյութերի գործնական արժեքը և նրանց պահպանման ժամանակամիջոցը կամ վոչնչացման վերաբերյալ հարցերը լուծելու իրավունքը վերապահված և ՀՍԽՀ կենտրոնական Արխիվային Վարչությանը և ի կատար և ածվում այլ մասին հրատարակված համապատասխան հրահանդների համաձայն:

Ծանոթություն. — Կենտրոնական Արխիվային Վարչության կողմից անսրժեք համարված նյութերը յենթակա յեն վաճառքի, վրբից ստացված զումարները կազմում են կենտրոնական Արխիվային Վարչության միջոցների հատուկ Փոնդը և ծախսվում են բացառապես ՀՍԽՀ արխիվային գործը բարեկարգելու նպատակով:

19. Միութենական նշանակություն ունեցող արխիվային նյութերի հայտաբերումը, հավաքումը, մշակումը, տեղեկատվությունը, գիտական և գործնական ողագործումը, տեղափոխումները, հրատարակումը և այլն՝ կատարվում են ԽՍՀՄ ԿԱՆ-ի հրահանդների համաձայն:

20. Առանց ՀՍԽՀ ԿԱՆ-ի թույլտվության արդելվում և արխիվային նյութերի տեղափոխումը թե ՀՍԽՀ սահմաններում և թե առհմաններից դուրս:

21. ՀՍԽՀ կենտրոնական Արխիվային Վարչությունը պահպան և պետական բյուջեյով, նրա պահպանության ծախքերն անց են կացվում կենտրոնական նախահաշվով, իսկ շրջանային արխիվները՝ համապատասխան շրջգործկոմների տեղական բյուջեներով:

22. ՀՍԽՀ կենտրոնական Արխիվային Վարչությունն ունի իր սեփական կնիքն ու դրոշմը. փոստ-հեռագրական հաղորդագրության, գրականություն ստանալու և առաքելու և այլ հարցերում նա վայելում և այն բոլոր արտօնությունները, ինչ և խորհրդային համապատասխան կենտրոնական արխիվներն ու ՀՍԽՀ կենտրոնական գիտական-հետազոտողական հիմնարկությունները:

## II ՍՈՒ

### ՀՍԽՀ կենտրոնական Արխիվային Վարչության ՄԱՍԻՆ

23. Կենտրոնական Արխիվային Վարչությունը դտնվում և ՀՍԽՀ կենտրոնական Գործադիր կոմիտեյի իրավասության ներքո, յենթարկվելով անմիջականորեն նախադահությանը:

24. Կենտրոնական Արխիվային Վարչության գլուխ և կանոնած նրա վարիչը, վորին նշանակում և ՀՍԽՀ կենտրոնական Գործադիր կոմիտեյի նախադահությունը: Վարչին, նրա բացակայության դեպքում, փոխարինում և տեղակալը, վորը նշանակվում և նույն կարգով:

25. ԿԱՆ-ի վարիչն իրավունք ունի անմիջականորեն զեկուցումներ անել կենտրոնական Գործադիր կոմիտեյի նախադահությանը, Ժողկոմիորհին, ինչպես և այլ կենտրոնական մարմիններին:

Կենտրոնական Արխիվային Վարչության վերաբերյալ հարցերը քննելու ժամանակ վարիչը մասնակցում է կենտրոնական Գործադիր կոմիտեյի նախադահության և Ժողկոմիորհի նկատերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

ՀՍԽՀ ԿԱՆ-ի վարչին իրավունք և վերապահված լուծել կենտրոնական Արխիվի Վարչության իրավասության յենթակա բոլոր հարցերը, նրանց թվում նաև սպառույթաների ընդունման և արձակման հարցերը:

26. ԿԱՆ-ի վարչին առընթեր գտնվում և խորհրդակցական կուկիսիան, վորը բաղկացած ե՝ վարչից, նրա տեղակալից և յերկու այլ անդամներից, վերջիններին՝ ԿԱՆ-ի վարչի առաջարկությամբ հաստատում և կենտրոնական նախադահությունը:

27. ԿԱՆ-ին առընթեր գտնվում և Արխիվային Խորհուրդը՝ ԿԱՆ-ի վարչի նախադահությամբ և Պետականի, Պետքաղվարչության, Լուսադիրութեատի, Բանդյուղտեսչության Ժողկոմատի, ՀՍԽՀ-ի, Կուսականի, Պետական և Հեղափոխական Թանգարանների, Գավառադիտական կենտրոնական Բյուրոյի, Մարքսիսմ-Լենինինիզմի Բնատիտառի և Հանրային Գրադարանի մեկական ներկայացուցիչների մասնակցությամբ: Խորհուրդն իրավասույթի քրն-

նության առնել զիտական, ծրագրային, մեթոդական խնդիրները :  
Խորհուրդն իրավունք չունի միջամտել կԱՎ-ի վարչատեսական  
և դորժառական ձևնարկումներին :

28. ՀՍԽՀ կԱՎ-ի պարտականություններն են . . .

ա) Պետական արխիվային ֆոնդի ընդհանուր տեսչությունը .

բ) ՀՍԽՀ արմող արխիվային գործի ընդհանուր ղեկավարությունը և կենտարխիվադահատի անմիջական անորինությունը .

շ) ՀՍԽՀ արխիվային ֆոնդերի կենտրոնացումն ու վերաբրմակորմը և ընդհանրապես այն բոլոր միջոցների կենսագործումը, վորոնք անհրաժեշտ են արխիվային ֆոնդի միասնացումն . ապահովելու համար .

դ) արխիվա-զիտական և արխիվա-տեխնիկական բոլոր աշխատանքների կազմակերպումն ու ղեկավարումը կենտրոնում ու տեղերում .

ե) պետական արխիվային ֆոնդի նյութերի համապատասխան սիստեմաթիվ զիտական հետազոտական ուսումնասիրությունների միջոցով ուժանդակել խորհրդային իշխանության քաղաքական, անտեսական և կուլտուրական շինարարությանն ու պայքարին . զիտական, գործնական-տեխնիկատվական, խորհրդատվական նպատակներով կազմակերպել պետական արխիվային ֆոնդի նյութերի ոգտագործումը շահաղբղոված պետական ու հասարակական հիմնարկների և մասնավոր անձանց կողմից :

Ծանրություն.—Պետական-հասարակական հիմնարկների հանձնարարությամբ կատարվող հատուկ աշխատանքները վարձարգվում են հիմնարկության և կԱՎ-ի փոխադադամանությամբ . իսկ մասնավոր մարդկանց սպասարկումը կատարվում է կԱՎ-ի մշակած վորոշումների համաձայն :

դ) կազմակերպել պետական արխիվային ֆոնդի նյութերի պլանաչափ հրապարակումը պարբերական և առանձին հրատարակություններով, այլև այդ նյութերի ուսումնասիրությունները .

է) զիտական-գործակցական կազ հաստատել և պահպանել ինչպես արտասահմանի, նույնպես և խորհրդային այլ հանրապետությունների և ՀՍԽՀ զիտական-պատմական, արխիվագիտական և այլ համապատասխան հիմնարկների ու կազմակերպու-

թյունների հետ, մասնակցելով նրանց համադումարներին ու կոնֆերանսներին, նաև զումարել արխիվային գործիչների համագումարները և խորհրդակցություններ .

ը) հրատարակել արխիվային հարցեզի վերաբերյալ ձեռնարկներ, հրահանգներ, ժողովածումներ, զիտական հանդեսներ, տեղեկատու բյուլետեններ և այլն .

թ) հսկողություն ունենալ ՀՍԽՀ պետական արխիվային ֆոնդի անվթար պահպանության նկատմամբ, միջոցներ ձեռք առնել այդ նյութերը վատանգելու, վոչչացնելու, փչացնելու և ապորինի գաճառելու դեմ, նաև արխիվային բոլոր նյութերի պահպանման, պետական Միասնական Արխիվային ֆոնդի հանձնման վերաբերյալ կանոնները խախտելու դեմ .

ժ) մշակել և ներկայացնել ի հաստատություն արխիվային գործի ընդհանուր ղեկավարության, ինչպես և արխիվային նյութեր հավաքման, սիստեմատիկացման և ողտադորձման վերաբերյալ որևէսդրությունների և վորոշումների նախադերը .

ի) անմիջաբար հրատարակել արխիվային ներքին գործական բության և շրջանային արխիվային գործումներության վերաբերյալ պարտադիր կանոնները՝ այն ղեկավար սկզբունքների համաձայն, վորոնք սահմանված են այս կանոնադրությամբ .

լ) միջոցներ ձեռք առնել պատրաստելու արխիվային աշխատակիցների կազը, կազմակերպելու դասընթացներ, խորհրդատվություն, գործուղումներ, նաև զասախնառությունների, ցուցահանդեսների, ուղղոյի, կինոյի և այլ միջոցներով տարածել արխիվային գիտելիքներ և ժողովրդականացնել արխիվային նյութերը :

### III ՄԱՍ

#### ՀՍԽՀ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՐԽԻՎԱԿԱՆ ՄԱՍԻՆ

29. Ցուրաքանչյուր շրջանում հիմնվում ե շրջանային արխիվալ շրջանում գտնվող Միասնական Պետական Արխիվային ֆոնդի նյութերը պահպանելու ու պատշաճ կերպով ողտադորձելու համար, բացառությամբ այն նյութերի, վորոնք գտնվում են ՀՍԽՀ կենտրոնական Արխիվային Վարչության անմիջական տնօրինության ներքո :

30. Երջանային արխիվը հանդիսանում ե ՀՍԽՀ կենտրոնական Արխիվային Վարչության մարմինը և գտնվում է շրջգործկոմների նախադահության առընթեր : Արխիվա-տեխնիկական բնագավառում ըրջանային արխիվը անմիջականորեն յենթարկվում է ՀՍԽՀ կենտրոնական Արխիվային վարչությանը :

31. Տվյալ ըլջանում արխիվային որենողքությունները կանոնավոր կիրառելու, ըրջանի հիմնարկների, կազմակերպությունների և ձեռանրկությունների գործավարության արխիվային մասը կանոնավորելու, ինչպես և շրջանային արխիվային նյութերը կոմոնսավոր պահելու և ողտադրութելու պատասխանատվությունը դրվում է ըրջանային արխիվի վարչի վրա :

32. Երջանային արխիվի վարչին նշանակում և պաշտոնից արձակում և Երջգործկոմի նախագահությունը, համաձայնության դալով ՀՍԽՀ կենտրոնական Արխիվային Վարչության հետ :

33. Երջանային արխիվի պարտականություններն են .—

ա) հաշվառման յենթարկելու ու ըլջանային արխիվում կենտրոնացնելու տվյալ շրջանի սահմաններում գտնվող և Միասնական Գետական Արխիվային ֆոնդը մացնելու յենթակա պիտական, արհետակցական, կոռուպերատիվ, կոլտնենուսական և այլ հիմնարկների ու կազմակերպությունների արխիվային նյութը, նմանապես տիրապուրկ և լրյալ արխիվները .

բ) սուուղել ու հրահանգել հիմնարկները, կազմակերպություններն ու ձեռնարկությունները՝ նրանց գործավարության ու արխիվային աշխատանքները կանոնավորելու համար .

շ) ղեկավարել արխիվների կազմակերպումը և հսկել դյուզական հիմնարկների, կազմակերպությունների, կոլտնենուսությունների և այլ գործավարության արխիվային մասը .

դ) ողտադրութել տեղական արխիվային նյութերը՝ գիտական, փադուքական և սոցիալ-տնտեսական շինարարության համար, նաև ժողովրդականացնել արխիվային գիտելիքներն ու նյութերը .

ե) տալ տեղեկանքներ, քաղվածքներ, և վավերագրերի պատճեններ՝ համաձայն ՀՍԽՀ կենտրոնական Արխիվային Վարչության սահմանած կանոնների՝ ըստ հիմնարկների, կազմակերպությունների և մասնավոր անձանց պահանջների .

դ) կազմել ըրջանային արխիվի աշխատանքների որինութիւնը պարբերական ծրագրերը, ներկայացնել այդ ծրագրերը ՀՍԽՀ

կենտրոնական Արխիվային Վարչությանն ի հաստատություն և ապա կենսագործել վերջինիս ղեկավարությամբ .

է) հոգալ և միջոցներ ձեռք առնել արխիվային նյութերը կորսություն և վշացումից դահապահնելու դիմել ըրջգործկոմի նախադահությանը արխիվային նյութերի վիշացման համար մեղավորներին որինական պատասխանատվության յենթարկելու .

ը) կատարել ըրջգործկոմի նախադահության կողմից կամ նրանց միջոցով յեղած առանձին առաջադրանքները .

թ) ընդհանրապես ձեռնարկել այն բոլոր միջոցները, վորոնք բղխում են այս կանոնադրության հիմունքներից :

34. Երջանային արխիվը, նախորդ հողվածի «Հ» և «Շ» կետերում նշված տեղական առաջադրանքները կատարելիս, պետք եղեկավարվի Հ. Ս. Խ. Կենտրոնական Արխիվային Վարչության կողմից առաջադրված ընդհանուր ծրագրերով :

35. Երջանային արխիվի վարիչն իրավունք ունի արխիվականի կերպության հարցերով անմիջորեն հարաբերությունը ունենալ ՀՍԽՀ կենտրոնական Արխիվային Վարչության հետ, ինչպես և ըրջանի սահմաններում գործող բոլոր մարմինների, կազմակերպությունների և ձեռնարկությունների հետ :

36. Երջանային արխիվի վարիչն իր բովանդակ գործունեյության համար հաշվեառ և պատասխանատու յե ՀՍԽՀ կենտրոնական Արխիվային Վարչության առաջ :

37. Երջանային արխիվն ունի իր սեփական կնիքը և չուամպը :

38. Երջանային արխիվի հաստիքը և նրա աշխատանքների հետ կապված բոլոր ծախսերը հողացվում են ըրջգործկոմի տեղական միջոցներից : Երջանային արխիվի նախահաշխիքները կազմվում են ընդհանուր հիմունքներով և կատարվում են սահմանված կարգով ըրջգործկոմի նախահաշխիքներով, սակայն նախապես համաձայնեցնելով կԱՎ-ի հետ :

#### IV ՄԱՍ

ԱՐԻՆՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԸ ԿԱՎ-ԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ, ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՑԵՎ, ՎԱԶՆՉԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

39. Գործող հիմնարկների, ձեռնարկությունների և կազմակերպությունների գործավարությամբ աշխատաված նյութերը տա-

սը (10) տարին լրանալուց հետո, վորպես պատմական նյութ՝ հանձնվում են ՀՍԽՀ պետական արխիվային ֆոնդին: Արխիվային նյութերը կարգավորվում են արխիվային կանոնների համաձայն և տեղափոխվում են սարքավորված Պետական Արխիվ՝ հանձնող հիմնարկի միջոցով:

40. Շրջանային հիմնարկների և գյուղխորհուրդների գործադրությամբ ավարտված նյութերը, բացառությամբ քաղաքացիական կացության ակտերի գրանցման, հանձնվում են ըրջանային արխիվներին յերեք (3) տարին լրանալուց հետո:

41. Ֆոտոնկարների ու կինո-ֆիլմերի նեղատիվները, կամ նրանց փոխարինող պողիափակները պատրաստելու պահից հինգ (5) տարին անցնելուց հետո հանձնվում են Կենտրոնական Արխիվին:

42. Արխիվային նույթերն ու գործերը, վորոնք հարկավոր են հիմնարկներին ընթացիկ գործունեյության համար՝ 39, 40 և 41 հոդվածներում նշված ժամանակամիջոցից ավելի յերկար ժամանակով, կարող են թողնվել այդ հիմնարկներում լրացուցիչ ժամանակով ՀՍԽՀ ԿԱՎ-ի հետ կայացած համաձայնության հիման վրա: Ընդվորում այդ ժամանակամիջոցը չի կարող լինել 15 տարուց ավելի:

Եանորուրյուն. — Քաղաքացիական կացության ակտերի գրանցող հիմնարկների մայտանները, նմանապես նախախորհրդային ժամանակաշրջանի բնակչության ծննդական (մետրիկական) ժատյանները մնում են համարտասխան հիմնարկներում, այդ ժատյանները ավարտելու պահից 75 տարուց վոչ ավելի ժամանակով:

43. Արխիվային նյութերի հանձնումը պետական արխիվային ֆոնդին 39, 40 և 41 հոդվածներում նշված ժամանակամիջոցը լրանալուց առաջ՝ թույլատրվում է, նախապես համաձայնություն կայացնելով այդ ժաման ԿԱՎ-ի հետ:

44. Հիմնարկների, կազմակերպությունների և ձեռնարկությունների գործադրաբարությամբ ավարտված նյութերը, վորոնք սահմանված ժամանակամիջոցը լրանալուց հետո հանձնվելու յեն Միասնական Պետական Արխիվային ֆոնդին, նախքան այդ հանձնելը յենթարկվում են զոտման, այսինքն՝ նրանց միջից պետք են դուրս հանվեն վոչնչացման յենթակա գործերն ու գործերի մեջ զոման յենթակա փաստագրերը, վորոնք վոչ մի գիտական արժեք:

16

Հունիս և հորցը են իրենց գործնական—տեղեկատուական նշանակությունը (արխիվային անպետք թղթերը):

45. Արխիվային նյութերի զառումը՝ պահելու կամ վոչնչացնելու համար՝ կատարվում և հետեւալ կերպով.

ա) արժեքավորելով նյութերի գործնական ու գիտական նշանակությունը.

բ) հանելով արխիվային ֆոնդերից կամ հիմնարկներից գործադրաբարությունից վոչնչացման համար տրաֆարետային բնույթ անեցող նյութերը՝ համաձայն նախապես կազմված դատվող ցուցակների.

գ) դասավորելով գործող հաստատությունների գործերն ըստ նյութերի պահպանման ժամկետների՝ հատկապես այդ նպատակի համար կազմված թվարկման ցուցակների: Այդ ցուցակներում պետք է լինի գործադրաբական նյութերի լիակատար թվարկման ըստ հիմնարկների կամ միատիպ հիմնարկությունների խմբերի, մատանանշելով գործադրաբարությամբ պամատված նյութերի պահպանման և վոչնչացման ժամկետները:

46. Հիմնարկներում, կազմակերպություններում և ձեռնարկություններում գործադրաբարությամբ պամատված նյութերն իրենց անմիջական արժեքավորման յեղանակով տալու համար, տվյալ հիմնարկի պետը, համաձայնության գալով կենտրոնական կամ ըրջանային Գետ. Արխիվի հետ, նշանակում և զտիչ հանձնաժողով՝ իր հիմնարկի իրազեկ աշխատակիցներից և Պետական Արխիվի ներկայացուցչի անպայման մասնակցությամբ:

Զտիչ հանձնաժողովը, ղեկավարվելով ԿԱՎ-ի հրահանդերական գննության և առնում բոլոր նյութերը և արժեքավորում և նրանց գիտական և տեղեկատու-գործնական նշանակությունը: Բացի այն նյութերից, վորոնք իրենց գիտական ու գործնական անհրաժեշտության հետևանքով յենթակա յեն վոչնչացման, զտիչ հանձնաժողովը կարող է համարել վոչնչացնելի նաև այն նյութերը, վորոնք իսպառ քայլային են և նրանց գերականութեան կամ ողատարծումն միանդամայն անհարին է:

47. Զտիչ հանձնաժողովի վորոշումները կցված ցուցակներով ու գոված նյութերի բնութագրերով ներկայացվում են ՀՍԽՀ ԿԱՎ-ին ի քննություն և ի վավերացում. ԿԱՎ-ը ստուգում է այդ վորոշումները, թե զտված նյութերի նշանակությունը վո՞րքան

Կառավարություն



17

Ճիշտ և ալժեքավորվել և վորքան ճիշտ են կիրառվել արխիվային  
կանոնադրության ու ԿԱՆ-ի Հրահանգների հողվածները :

48. Այս կանոնադրության 46 և 47 հողվածներում նշված  
խնդիրներն իրականացնելու համար՝ ԿԱՆ-ին առնթեր կաղմվում  
եւ վերստուգիչ հանձնածողով՝ ԿԱՆ-ի վարչի նախադահությամբ։  
Վերստուգիչ հանձնածողովի վրաշումները վերջնական են։

49. Միասնական Պետական Արխիվային ֆանդը մտած արխի-  
վային նյութերի գտումը կատարվում է նույնպես վերոհիշյալ 46  
և 47 հողվածների հիման վրա։ Պետական Արխիվի աշխատակից-  
ներից կաղմված զտիչ հանձնաժողովին մասնակցում են նաև շա-  
հագրգումած հաստատությունների ներկայացուցիչները։

50. Զտիչ ցուցակները կազմվում են շահագրգումած հիմնարկ-  
ների կողմից, իսկ մինույն գերատեսչության պատկանող միա-  
սիլ հիմնարկների գործավարությունների համար՝ համապա-  
տասխան վերադաս մարմինների կողմից։ Զտիչ ցուցակների մեջ  
մտցվում են մասսայական բնույթի (անդորրագրեր, արտատներ,  
կոչնագրեր, հայտարարություններ, քեռնադրեր և այլն), և տրա-  
ֆարետային բնույթի (ավելորդ պատճեններ, գործավարության  
մեջ ճիշտ կիրառվող միատեսակ բովանդակության զբություններ  
և այլն) գործերն ու վավերագրերը, յեթև այդ նյութերը նախա-  
պես կճանաչվեն գիտական ու գործնական նշանակություն չունե-  
ցող։ Կենտրոնական հիմնարկների կազմած զտիչ ցուցակները  
հաստատում են ԿԱՆ-ի վերստուգիչ հանձնածողովը։

51. Գործավարությամբ ավարտված նյութերի պահպաններ  
ու վոչնչացնելու համար՝ շահագրգումած կենտրոնական  
հիմնարկները կազմում են արխիվային թվարկացուցակներ։ այդ  
ցուցակների մեջ, անկախ արխիվային նյութերի գիտական ու գործ-  
նական նշանակությունից, թվարկվում են գործերի բոլոր անվա-  
նումները, վորոշելով, վոր նրանք պետք են՝

ա) պահպես մշտնշնապիս։

բ) սրահին ժամանակավորապես՝ զանազան աերակի գործե-  
րի համար սահմանված համապատասխան տեսղությամբ։

շ) վոչնչացվելու։

Ճիշյալ թվարկացուցակներ— նախազերը հաստատում են  
ԿԱՆ-ը։ Հիմնարկների կողմից նշանակված ժամկետները չեն կո-  
րող կրծատվել։

52. Պահպանման վեց յենթակա արխիվային նյութերի վոչն-

չացման ձևերը հասուլ հրահանգով սահմանում են ԿԱՆ-ը, հա-  
մաձայնության գալով՝ Բանդյուզաչության Ժողկոմատի հետ է

53. Պետական Արխիվային Փոնդին հանձնելի Փոտո-կինո նե-  
տատիվների կամ պողիտիվների գոտումը կատարում է ԿԱՆ-ի կող-  
մից նշանակված փորձադեսների համամայումը, վարին մաս-  
նակցում են նաև Նեղավոխության թմբարանի ներկայացուցիչ-  
ները։ Փորձագետների հանձնաժողովը զեկավարիում է հատուկ  
Հրահանգով, վորը հրապարակում է ԿԱՆ-ը, և ուստողիոմատի  
հետ համաձայնության գալով։

#### V ՄԱՍ

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ, ՔԱՂՎԱԾՔԻՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՃԵՆՆԵՐԻ  
ՏԱԼՈՒ ԿԱՐԳԻ

54. Արխիվային տեղեկանքները, քաղվածքներն ու պատճեն-  
ները տրվում են կենտրոնական ու չրջանային Պետական Արխիվ-  
ներից պետական մարմիններին, հասարակական կաղմատեղաբու-  
թյուններին, տնտեսական ձեռնարկություններին և մասնավոր  
մենահանց նբանց զրավոր զիմումների համաձայն։

Ծանրություն։— Արխիվային տեղեկանք եւ կոչում  
Պետական Արխիվի կողմից տրված պաշտոնական հայտա-  
տողին այն մասին, վոր ալյալ արխիվի վորոշակի նշան-  
վավերագրերում կան տեղեկանքի տուարեկա հանդիսացող  
փաստերի ու իրավունքների վերաբերյալ վորոշ տվյալներ։  
Արխիվային քաղվածքը՝ մասնակի, իսկ պատճենն՝ ամբող-  
ջական զրավոր ընդորինակումն և պետական տվյալ արխի-  
վում պահպան վավերագրի բովանդակության։

55. Արխիվային տեղեկանքները, քաղվածքներն ու պատճեն-  
ները տրվում են մասնավոր անձանց միայն պետական ու հասարա-  
կական հիմնարկներին ներկայացնելու համար այն հարցի մասին,  
վորոնք վերաբերում են այդ անձանց անձնական և գույքային իրա-  
վունքներին։ Պաղստի նյութերի վերաբերյալ տեղեկանքները, քաղ-  
վածքներն ու պատճենները, նմանապես գույքային իրավունքների  
մասին տեղեկությունները, վորոնք գոյացել են տվյալ տերիտո-  
րիայում, մինչև խորհրդային իշխանության հաստատումը, մաս-  
նավոր անձանց չեն տրվում։

Ծանոթություն.—Գաղտանի յեն համարվում հեղափոխական ժամանակաշրջանի Հիմնարկների գաղտնի և վոչ գաղտնի գործադրության նյութերը, վորոնք հանձնվել են պետական արխիվներին վորապես գաղտնի գործեր, նմանապես և այն նյութերը, վորոնց հրապարակումն ըստ նրանց բավանդակության բնույթի ԿԱՎ-ը կամ համապատասխան պետական Հիմնարկները զանում ևն պետական շունչերի տեսակետից անթույլատրելի:

56. Ռոտարակապատակ քաղաքացիներին արխիվային տեղեկանքները, քաղաքածքներն ու պատճենները տրվում են միայն Արտաքին Գործերի կոմիսարիատի կամ նրա դիմոնադիտուական գործակալի միջոցով: Նույն կարգով տեղեկանքները են արվում գույքային և այլ իրավունքների մասին, վորոնք իրադորժվելու յեն արտասահմանում:

57. Բացի 51-րդ հոդվածում նշված դեսկերից, մասնավոր անձնագույքային և անձնական իրավունքների հարցերին վերաբերյալ արխիվային տեղեկանքները, քաղաքածքներն ու պատճենները Համապատասխան որևէ նախատեսված կարգով տրվում են միայն զատական, քննչական ու գտառախաղական մարմիններին:

58. Արխիվային տեղեկանքները, քաղաքածքներն ու պատճենները, վորոնք մեկ թերթից ամելի յեն (հաջելլիլ թերթը 30 տող), կարող են պատրաստվել միայն գիմողի հաշվին, համաձայնության գալու Պետական Արխիվային Վարչության հետ:

59. Պետական արխիվներում պահվող նկարների, հատակագծերի, քարտեզների պատճենները կամ լուսանկարները, նաև հինգամերգի ընդունակումները պատրաստվում են՝ այդ աշխատանքների լրիվ արժեքը Արխիվի Վարչությանը վճարելուց հետո:

60. Արխիվային տեղեկանքները, քաղաքածքները, պատճենները կազմելու և հանձնելու կարգը սահմանվում և ԿԱՎ-ի հրատարակած համաձայն:

## VI Ս.Ս

### ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՈԴՏԱԴՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

61. ՀՍԽՀ Միասնական Պետական Արխիվային Փոնդի նյութերի ոգտագործմանը կամ ուսումնասիրությամբ կարող են զբաղվել պետական կամ հասարակական հիմնարկների, կազմակերպու-

թյունների ու ձեռնարկությունների ներկայացուցիչները՝ համապատասխան Հիմնարկների առաջադրանքներով, և դիտական աշխատավորները, վորոնք կոնկրետ ուսումնասիրության վերաբերյալ ներկայացնում են պատշաճ հանձնարարականներ:

Ռոտարակապատակներին թույլատրվում և զբաղվել միայն Արտաքին Գործերի ժողկոմատի կամ վերջինիս ՀՍԽՀ դիվանագիտական պատական դուռը կարագալի հանձնարարականով:

62. Պետական արխիվային Փոնդի նյութերի ուսումնասիրությամբ զբաղվելու թույլատրյան իրավունքը վերապահված է ԿԱՎ-ի վարչին:

63. Պետական արխիվային Փոնդի նյութերի ուսումնասիրությամբ զբաղմունքները տեղի յեն ունենում Պետական կենտրոնական Արխիվին առընթեր ընթերցանության հատուկ սրահում կամ այլ նպատակի համար հատկացված առանձին սենյակում:

64. Արխիվային նյութերի ուսումնասիրությամբ զբաղվելու թույլատրյան ստացած անձինք պարտավոր են անշեղ կատարելու այդ նպատակով ՀՍԽՀ ԿԱՎ-ի սահմանած կանոնները, վորոնց խախտման դեպքում նրանք զրկվում են թույլատրյան իրավունքից:

65. Արխիվային նյութերի ոգտագործումը կատարվում և միայն արխիվում: Վորպես հատուկ բացառություն թույլատրվում են կենտրոնարինիլի պահեստից ժամանակավորապես զուրու տանել անմիջական ոգտագործման համար արխիվային գործերը պետական ու հասարակական հիմնարկներին կամ ձեռնարկություններին, այն դեպքում միայն, յերբ նրանք իրենցից անկախ պատճառներով կոմ նրանց աշխատանքի արարարդ բնույթի պատճառով խապատ հնարավորություն չունեն աշխատելու կենտրոնական Արխիվում:

Այդ դեպքում արխիվային գործերը զուրու և արվում 3 ամսեց վոչ այլի ժամանակով: այդ ժամանակամիջոցի յերկարացումը թույլատրվում և բացառիկ հանդամանքներում ԿԱՎ-ի վարչի կողմից:

Ծանոթություն.—Ձուու և կինո նյութերը ժամանակա- վոր ոգտագործման համար բնալ զուրու չեն արվում:

66. Արխիվային այն նյութերը, վորոնք զոյցել են Լուսադու- կոմատի յենթակա պիտական, զբական-դեղարվեստական և թան- գորանացին հաստատությունների գործունեյության ընթացքում:

և անքակտելի կապված ևն նրանց ընթացիկ պիտական աշխատանքների կամ, այն է՝ զերակառուցման համար անհրաժեշտ ձարսարապետական նյութերը, թանգարանային գույքի ցուցակները, մեմորատիվ բնույթունցող վավերագրերը, դիտական աշխատանքների և հիշյալ հիմնարկների հետազոտական աշխատանքների բնադիր նյութերը, մտնում են ընդհանուր հիմունքներով Միանական Պետական Արխիվային Փանովի մեջ, սակայն կարող են բաց թողնվել վերոհիշյալ հիմնարկներում դիտական-ուսումնասիրական աշխատանքների համար և ժամանակավոր կամ մշտական ցուցադրության համար, հատուկ համաձայնության հիման վրա, փոքր կացացվում են ԿԱՎ-ի և Հուսիողկոմատի միջև։

67. Դատական, քննչական ու դատախաղներական մարմիններն իրավունք ունեն պիտական արխիվներից գուրս տանել առանձիւ գործեր ու վավերագրեր միայն այն գեպքում, յերբ անկարելի յետեղում սահմանափակվել, միայն այդ գործերի ու վավերագրերի գննումով, կամ պատճենների ու քաղվածքների հանույթով։ Պետական արխիվներից պահանջված գործերն ու վավերագրերը թույլատրվում են քննիչներին գուրս տանել միայն քննության ընթացքը զեկավարող դատախաղի համապատասխան դիմումի հիման վրա։

68. Համաձայն այս կանոնադրության 64-րդ հոդվածի՝ ժամանակավոր ողատպորձման համար գուրս արված, նաև 63-րդ հոգվածի մեջ հիշտակիված հաստատություններում ի պահ թողնված արխիվային նյութերը՝ նրանց վերապահված ամբողջ ժամանակամիջոցի ընթացքում դանում են ԿԱՎ-ի հոկտորիթյան ներքո։ Հիշյալ հիմնարկները վո՞չ մի գեպքում իրավունք չունեն այդ արխիվային նյութերն իրենց կողմից տալ ուրիշ անձանց ովտագործելու, կամ գրապարակելու համար իրենց կողմից ողտագործել, կամ թե այդ նյութերից տեղեկանքներ ու պատճեններ տալ։

69. Պետական արխիվային նյութերի ուսումնասիրությամբ պատվիրակությունը թույլատրվում է իրավունք չի տալիս ուսումնասիրութիւն հրատարակել նյութերն ու վավերագրերը մասնակի կամ ամբողջական կերպով։ Արխիվային նյութերի բնադրերի ամբողջական հրապարակումը կարող է կատարվել միմիայն ԿԱՎ-ի հատուկ թույլատրվյամբ և այդ առթիվ սահմանված կանոնների համապատասխան։

70. Արխիվային նյութերի ընդորբնակումը (արտանկարել կամ լուսանկարել) ուսումնասիրություններին չի տալիս այդ նյութի վերաբերյալ հեղինակի իրավունք։ Այդ ընդորբնակումների հրատարակումը մամուլի մեջ, ցուցադրումը կամ այլ համանման ողտագործումը թույլատրվում է միայն այս կանոնադրության 69-րդ հոգվածում նշված կարդով։

71. Հիմնարկները, կաղմակերպությունները և անհամ ուսումնասիրությունները, փորձնք հրատարակել են արխիվային նյութերի վերաբերյալ ուսումնասիրական աշխատություններ, կամ համապատասխան թույլատրվյամբ (հոդ. հոդ. 69 և 70) այդ նյութերի բնադրելը կամ նկարչական, պատճենները, ոպարանվոր են արտադրել ԿԱՎ-ին այդ յերկանիրությունների կամ հրատարակությունների 2-ական որինակը։

72. Արխիվային այս կանոնադրության և սրա հիման վրա հրատարակված հրահանդիների խախուման համար զանցառու պաշտոնյաներն ու քաղաքացիները յենթակա յեն պատասխանատվության ընդհանուր հիմունքներով։

#### ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻԲ ԿՈՄԻՏԵՅՑԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ԱՌԱՋԱՅԱՆ

ԺԱՂԱՔՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԿՈՐՃՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՅԵՐՉՆԿՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻԲ ԿՈՄԻՏԵՅՑԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Բ. ԴԱՇՏՈՅԱՆ

ՅԵՐԻԱՆ

Բ.

ԿԱՆՈՆՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՌԳԵՐԱՍԻՎ ՀԻՄ-  
ՆԱՐԿՆԵՐԻ, ԿՈԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆԵՐԻ ԱԽ ՉԵՒՆ ԱՐ  
ԿԱՂԹՅԱՆՆԵՐԻ ԱԹԽԻՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒԹՅ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Ներկա կանոնները կիրառվում են Խորհրդային Հայաստանի սահմաններում զործող բոլոր պետական, արհեստակցական և կոռուպտատիվ հիմնարկներում, կազմակերպություններում ու ձեռնարկություններում:

2. Բոլոր աշխատած զործերը, մատյաններն ու այլ նյութերը պահպան են հիմնարկներում 10 տարուց վոչ ավելի, վորից հետո հիմնարկների կողմից հանձնվում են ՀԱԿՀ կենտրոնական Արխիվային Վարչության մարմիններին (առ. կետ 80):

Ծանոթություն. — Գործադարտությունը ավարտած նյութերը, վորոնք անհրաժեշտ են հիմնարկի ընթացիկ գործադարտությանը, վերջինիս և կենտրոնարդիթիվի միջև կայացած համաձայնությամբ՝ կարող են թողնվել հիմնարկություն լրացուցիչ ժամանակով: Գործադարտական նշանակության չունեցող նյութերը կենտրոնարժիշտ համաձայնությամբ կարող են հանձնվել իրեն 10 ամյա ժամկետից առաջ:

3. Գործադարտությամբ ավարտած նյութերը պահվելու յեն հիմնարկներում՝ առանձնացրած այն բոլոր նյութերից, վորոնք պահպան են ընթացիկ գործադարտության մեջ, և զետեղվելու յեն հիմնարկի արխիվ կոչվող հատուկ սենյակում կամ չենքում:

4. Արխիվների կազմակերպման հոգալ վերապահվում է կենտրոնական հիմնարկների նկատմամբ—այդ հիմնարկների զեկավար մարմիններին, ըրջանային հիմնարկների նկատմամբ՝ ՄՀԿԴու-

կոմիսին, արհմիութենական և կոռուպտատիվ կաղմակերպությունների նկատմամբ՝ համարատափան խորհուրդներին և վարչություններին: Խմբավորված հիմնարկների համար, վորոնք միացած են մի ընդհանուր պնմիջական գերազանչությամբ, կարելի յել կազմակերպել այդ հիմնարկներից վորոնք մեկին առնելթեր մի ընդհանուր արխիվ:

Արդեւմում և արխիվ չունեցող հիմնարկին իր արխիվային նյութերը հանձնել այլ արխիվներին:

5. Յուրաքանչյուր հիմնարկի իր արխիվի համար պարտավոր ետքամազը բավարար տարածության սենյակ կամ չենք, միանգամաց ապահով հրդեհից և այլ վտանգներից, կողմնական փակող և արխիվային նյութերի զետեղման համար սարքավորված դարակներով ու պահարաններով:

Ծանոթություն. — Գաղանի գործերը պահելու համար անհրաժեշտ են ունենալ կամ հատուկ սենյակ, կամ սանաձնի ամուռ՝ պահարան՝ ապահով կողմեքներով:

6. Հիմնարկի արխիվը մտած վոչ մի գործ և գորոթյուն, առանց բացառության նաև նրանց կցված պատճենները, սենյակը, պաշտոնական նշանառումները և այլն, վորքան եւ սրանք անկարենոր թվան, չեն կարող վոչնչացվել վոչ հիմնարկի, վոչ եւ այլ մարմինների կողմից, վորոնց յնթակա յեւ տվյալ հիմնարկը:

Ծանոթություն 1. — Գերատեսչական հատուկ հրահանդերով նախատեսված զեպքերում պաղտնի գրությունների վրա չի տարածվում սույն հորիածի պահանջը:

Ծանոթություն 2. — Նյութերը վոչնչացնելու համ որակելու վորոշումը կայացնում են կենտրոնարժիշտի Զորիչ Հանձնաժողովները՝ շահագրգուժած հիմնարկների նկրկուցացիների մասնակցությամբ: Զորիչ Հանձնաժողովների վորոշումները կենտրոնարժիշտի վելասուրբիչ Հանձնաժողովի և կենտրոնարժիշտի վարիչի կողմից վոլերացվելուց հետո կենտրոնարժիշտի մարմինները վոչնչացնում են նյութերը հումորիթի համար սպառագործելու կամ այլ յեղանակով:

7. Հենուրունուկան և տեղական հիմնարկների բոլոր արխիվները յերեք ամսություններում իրենց կազմակերպման որից պետք

և գրանցված լինեն ՀԱԽՀ կենտրոնական Արխիվային վարչության մեջ, կամ նրա ըրջանային ուղանենքում ըստ սրբականելույն:

8. Նախորդ հոգվածում նշված զբանցումը կատարվում է Յորինակ, հասուն դրանցման քարտերը լցնելով, վորց մեջը մնում է Հիմնարկի արխիվի գործերում, իսկ յերկուուր ներկայացվում են կենտրարխիվի համապատասխան մարմիններին: (Տես ձեռ № 1):

## II

### ՀԻՄՆԱՐԿԻ Ա. Ք. Ա. Վ. Ա. Կ. Ա. Ն ՆՅՈՒԹԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

9. Հիմնարկների բոլոր դիլաններն ու առանձին գործավայրություններն իրենց գործերի և այլ գործավարական նյութերի պահպանման ու հաշվառման նպատակով կազմելու յեն յուրաքանչյուր տարիա համար առանձին դիլանական ցուցակներ (տես ձեռ № 2), և սրա մեջ մուծելու յեն հերթական № Նույլ, ըստ իրենց սկզբնավորության, բոլոր գործերը, մատյաններն և այլ նյութերը, վորոնք զոյացել են կամ մտել են գործավարության մեջ ավյալ որացուցային տարիա ընթացքում, այսինքն՝ հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը:

Ծանոթություն 1.—Գործ և կոչվում առանձին համախմբումն այնպիսի գրությունների, վորոնք կապված են առարկայի միասնականությամբ կամ թղթակցի ընդհանությամբ և դասավորված են վորուշ կարգով:

10. Հիմնարկի դիլանը մտնող բոլոր հրատարակությունները, պլակատները, հայաբարձրություններն ու այլ տպագրական նյութերը, վորոնք ուղղված են միայն Հիմնարկին և վոչ թե առանձին պաշտոնական մոնիթորին, գրանցվում են դիլանական տուքեկան ցուցակի հասուն, լրացուցիչ բաժնում, առանձին հերթական համարակալությում:

11. Այն գործերը, վորոնց գործավարությունն ավարտելու կամ չարուծակելու համար հանձնվում են մի այլ Հիմնարկի կամ ավյալ հիմնարկի մի այլ բաժնին, գրանցվում են դիլանական ցուցակում վորուշ գույքու հանված, նշանակելով, թե ո՞ւր

և ի՞նչ կարգարության հիման վրա յեն հանձնվում, այդպիսի գործեր ընդունող դիլանն այդ զբանցում և ընթացիկ տարվա իր դիվանական ցուցակի մեջ ըստ հերթական Նո-ի, նշանակելով նույնպես նրա հին Նո-ը և վորտեղից ստացվելլ:

12. Դիվանական ցուցակը կազմվում և տարվա սկզբին և նախքան նրա մեջ ցուցակադրելլ, պետք և համարակալել ըստ թերթերի և նրանց քանակը հավաստագրել վերջին թերթի հակառակ եցում:

13. Դիվանական ցուցակների կիրարկումը պարտադիր և նաև այն դիվանների համար, վորտեղ գործավարական նյութերի զբանցումն և հաշվառքը կատարվում և քարտային սիստեմով:

## 1. ԳՈՐԾԵՐԻ ԱՎԱՐՏԸ

14. Դորձն ավարտված և համարվում, յերբ վերջացել են այդ գործին վերաբերյալ բոլոր գործավարությունները և չեն նախատեսվում, այլև մտցնել նրա մեջ գործավարական նոր գրություններ:

Ծուրաբանչյուր գործի ավարտը պետք և հաստատվի դիվանապետի կամ համարակալու պաշտոնյայի ձեռքով ավլութ գործի վերջին դրված թերթի հակառակ եցում («սովարոված ե», «պատրաստ և հանձնելու և այլն»):

15. Հաշվապահական մատյաններն ու դրքերը ավարտված ևն համարվում բյուջետային տարվա վերջը:

## 2. ԳՈՐԾԵՐԻ ԹԵՐԹԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒՄՆ

16. Ավարտված գործերի մեջի գրությունները, նրանց դասավորման կարգը (ժամանակագրական կամ հիմնարկում կիրարկվող) ստուգելուց հետո համարակալվելու յեն ըստ թերթերի, ընդունում համարակալված վերջին թերթի մյուս եցում պետք և դիվանապետի կամ համարակալու պաշտոնյայի ստորագրությամբ հավաստագրվի այդ թերթերի քանակը տառերով:

Ծանոթություն.—Այդ հավաստագրի մեջ, բացի համարակալված գրված թերթերի քանակը նշելուց, պետք և մտածի հիշտոտակել նաև գործում ավարտնական բոլոր հավելվածները (տես ձեռ № 3):

17. Կամբով. Համարակալում են բոլոր թե գրված և թե  
առաջին կամ 2-րդ եջում վարեն, թե կուզ կարձ, նշանառումներ  
պարունակող թերթերը : Մաքուր թերթերը, նմանապես և բլանկ-  
ները, զանազան տպագրված ձևերն ու տբաֆարետները բնավ չեն  
համարակալում :

Ծանոթություն 1.—թերթ ե կոչում ամեն մեծության  
ու ձեփ թղթի կառը, վոր ունի յերկու յերես :

Ծանոթություն 2.—թերթի գործի մեջ համարակալված  
լինեն նաև մաքուր թերթեր, այն ժամանակ Հայաստա-  
գարման մեջ անհրաժեշտ է նշել այդ մասին (**«5, 12 և 53-րդ**  
**թերթերը մաքուր են»**) :

18. Հաշվապահական և այլ ժամանակներում,  
վորոնք արդեն ունեն համարակալված ու ժամանակայի թերթերի  
քանակի հավաստագրումն, արիսլին հանձնելու պետք և նշեն  
մաքուր թերթերը (**«12, 18, 35-րդ... թերթերը մաքուր են»**) :

### 3. ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԵԼՆ ՑԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀՊԱԽՄԱՆ ԱՅԼ ՄԻՋԱՑՆԵՐԸ

19. Գործավարությամբ ավարտված բոլոր գործերը պետք ե  
կարովեն համապատասխան շաղթեների մեջ, պահպանելով թերթ-  
երի դաստիարման կարգը, ընդ վորում թերթերով ստվար գոր-  
ծերը կարելի յև բաժանել հասորների (մասերի) :

Ծանոթություն. 1.—Գործերի թերթերը կիստ կար-  
վում են շաղթեների ներքին կոճղերին, թերթերի ծախ  
կողը ծալելով այնպես, վոր չլսնավին թերթի վրա դրված  
տառերն ու թվանշանները, յեթե թերթն ամբողջովին դրվ-  
ված լինելու հետևանքով ծալելու համար աղատ տեղ չու-  
նի, այն ժամանակ նրա ծախ կողին կողնում են մաքուր  
թղթի շերտ (ժամանակ), վորի վրայով ել ծալում են և  
աստ կարում կոճղին :

Ծանոթություն 2.— Գրությունների հետադա կարելը  
գյուրացնելու համար, անհրաժեշտ է, վոր գրություն ա-  
նելիս ձախ կողից պահպանի լուսանցք, մոտ յերկու սմ-  
լույնությամբ :

Ծանոթություն 3.—թերթ գործ կազմող գրություն-  
ները պահվում են մեքենական ամրիչներ ունեցող բեղիս-

տրատորի մեջ, այդ դեպքում գործը արխիվին հանձնե-  
լիք թերթերը պետք ե համարակալվեն և ժամանակվեն  
(կարելու գոխարին). Ժապավինյալ ձեռվ պահվող գրու-  
թյունները արխիվին հանձնելիս պետք ե համարակալված  
լինեն ըստ թերթերի :

20. Գործավարության վարիչները հսկելու յեն, վորպեսզի  
գործը ծավալի գրությունները մի կույտով չկարվեն շաղկի վերին  
կամ ստորին ծայրում, այլ համաշափ դանավորվեն շաղկի ներ-  
քին կոճղի ամբողջ յերթաբառթյամբ, նմանապես հսկելու յեն,  
վորպեսզի ստվար գործերում բոլոր գրություններն ամբողջովին  
չկարվեն մի ընդհանուր ծակոտիվ, վոր դժվարացնում ե գործի  
բաց անելը. այդպիսի գործերի թերթերը պետք ե նախապես ծալ-  
վեն 15-20-ական հատուկ իրեն տեսակներ և առա ամրացվեն  
շաղկի կոճղին :

21. Կարեսոր գործերի, վավերագրերի և այլ նյութերի պահ-  
պանության այլև նրանցից ողպվելու գյուրության համար,  
հիմնարկները պետք ե, ըստ կարելույն, ձեռնարկեն համապա-  
տասխան հատուկ միջոցների, այն ե՝ պետք ե հատակաղծերը,  
քարտեզները, գծադրերը կաղանել քաթանի վրա, գյուրին պատը-  
զող թղթեր փակցնել խավաթղթերին, չծածկելով հակառակ եղի  
գրությունները, կարեսոր գործերն ու վավերագրերը փոշուց և  
փչացումից աղահովելու համար գետեզել կարտոնե թղթապա-  
նակների մեջ, զրբելն ու տեսակներն աղահովել կարտոնե կազ-  
մերով, դժվար ընթեռնելի գրություններից հանել պատճեններ,  
ուստի լիզուններով վավերագրերին կցել նրանց թարգմանություն-  
ներն ե այլն :

### 4. ԳՐՈՒԹԵՐԻ ՇԱՓակների Վերնադրերը

22. Հիմնարկի արխիվին հանձնելի գործերի և այլ նյութերի  
շապիկների վրա պարզորոշ և առանց կրծառումի նշանակված  
ուետք ե լինի ամբողջ վերնագրերը (տես ձև 4) :

Ծանոթություն. — Կազմերի և թղթապահակների ա-  
ռաջակողմ յերեսի վրա պետք ե կողցնել սպիտակ թղթեց  
պիտակներ (յարլիկներ), վորոնց վրա նշանակվելու յե-

վերնառիրը, ավելացնելով հիմնարկի անունը, բաժնը,  
տարեթիվն և №-ը:

23. Գործի տարեթիվն և №-ը, վորպես ինվնատարային հիմ-  
նառան նշաններ, պետք է գրված լինին խոչը ու պարզ թվանշան-  
ներով շաղկի վերին մասում, աչքի ընկնդղ տեղում, բայց վոչ  
այնքան մոտիկ շաղկի կողքին. դերադասելի յև դործի տարեթի-  
կը գրել շաղկի մեջտեղում, իսկ №-ը՝ միհնույն գծի վրա,  
մի փոքր մոտիկ աչ կողին (տես ձև № 4):

24. Յեթև տվյալ հիմնարկում կիրարկվում և դործերի ա-  
ռարկայական դասավորման սխառեմը տառային կամ թվանշային  
շիֆրերով (որինակ դործերի բաժանումն Ա. Բ. Գ. և այլ սերիա-  
ներով և ա<sup>1</sup>, ա<sup>2</sup>, ա<sup>3</sup>, 6<sup>1</sup>, 6<sup>2</sup>, 6<sup>3</sup> յենթասերիաներով), կամ տաս-  
նորդական սխառեմով), ապա տառարկայական թվանշանները գրը-  
վելու յին շաղկիների վրա այնպես, վոր շխանդարեն այդ տար-  
վա դործի թվականի և №-ի թվանշաններին:

Ծանոթություն.—Առաջարկվում է այդ շիֆրերը դրեւ  
դործի տարեթիվի ու №-ի նշանների տակ քաշած հաստ գծի  
սոսորեւ:

25. Ծավալով ստվար գործը մի քանի մասերի (հատորների)  
բաժանելով, վերջինները նշանակվում են մեկ տարեթվով և մեկ  
№-ով և կրում են բովանդակության մի ընդհանուր վերնադիր  
բոլորի համար, ընդ վորում յուրաքանչյուր հատորի վրա նշանա-  
շկով են տվյալ դործի հատորների ընդհանուր քանակը:

Ծանոթություն 1.— Հատորի հերթական №-ը գրը-  
վում է թերթերի քանակի նշանակումից առաջ, յեթև յու-  
րաքանչյուր հատորի թերթերը համարակալված են առան-  
ձին (1 հատոր, 328 թերթերով).

Ծանոթություն 2.— Յեթև դործն ունի թերթերի մեկ  
ընդհանուր համարակալություն բոլոր հատորների համար,  
այն ժամանակ յուրաքանչյուր հատորի վրա վերնադիրը  
հետո նշանակվում է ամբողջ դործի բոլոր թերթերի քա-  
նակն, ապա նշանակվում է հատորի հերթական №-ը և վեր-  
ջապես տվյալ հատորի մեջ պարունակվող թերթերի քա-  
նակը սկզբի և վերջի թերթերով (որինակ՝ «Ամբողջ դործում  
897 թերթ. 2-րդ հատոր, 265—617 թերթերով»).

Ծանոթություն 3.— Յեթև հատորի մեջ գրություն-  
ներն ամփոփված են վորեւ հատկանշով (ժամանակադրա-  
կան, առարկայական և այլն), այն ժամանակ հատորի հեր-  
թական №-ը նշանակելով՝ կարելի յէ զնել նաև հատորի  
հակիրճ յանթավերնագիրը, համապատասխան պարունակ-  
ված գրությունների («2-րդ հատոր: Ստացականներ մա-  
յիս-պատոսու, 320 թերթ»):

26. Գործերն ու այլ նյութերը, վորոնք դործավարության  
շաբանակության կամ վճռելու նախակով մի հիմնարկից հանձն-  
վում են մի ուրիշին կամ մի ննջուրույն բաժանմունքից մյուսին,  
վերջինների ձեռքով կարգում են նոր շաղկիների մեջ, պահպանե-  
լով չին շաղկիները, այդ նրու շաղկիների վրա նշանակվում են  
վերաբեր բոլոր տվյալներն, ինչպես և տարեթիվն ու դործի №-ը՝  
բնույնող հիմնարկի կամ բաժանմունքի ցուցակի համապատաս-  
խան, ընդ ամին շաղկի վրա, ուր նշված ե «յե՞ր և սկսված գոր-  
ծը», պետք է լրացնել այսպես՝ «Շարունակություն այս ինչ տար-  
վանից, ամսոց և թիվից ստացված և այս ինչ հիմնարկից կամ  
բաժանմունքից»:

5. ԳԱՐԾԵՐՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱԱՎԵՐԱԳԻԵՐԻ ՆԵՐՔԻՆ  
ՑՈՒՑԱԿԸ.

27. Գործավարական նյութերի լավաղույն պահպանման ու  
հաշվառքի նպատակով կարեւություն ունեցող դործերին պետք  
է կցել, հիմնարկի համապատասխան բաժնի վարչի հայեցողու-  
թյամբ, նրանց համառոտ ներքին ցուցակը, վորի մեջ մուծվելու  
յին այն բոլոր գրությունների անունները, վորոնք հետզհետեւ կըց-  
վում են այդ դործին (տես ձև № 5):

28. Գրությունների ներքին ցուցակները պետք է գրվեն ա-  
ռանձին թերթերի: վրա, վորոնք կարգում են շաղկից անմիջապես  
հետո, տվյալ դործի սկզբնական թերթից առաջ: Դործի շաղկի  
վրա պետք է նշանակված լինի, վոր դործին կցվում է ներքին  
ցուցակ (որինակ՝ «գործին կցված ե ներքին ցուցակ 3 թերթից՝  
գործում կա 45 թերթ»). ներքին ցուցակի մասին նշանակվում է  
նաև վերաբեր ցուցակի մեջ:

Ծանոթություն.—Ներքին ցուցակի թերթերը համա-  
րակալվում են դործի թերթերից առանձին, և նշանակվում  
է շաղկի վրա այսպես՝ «գործում 3+215 թերթ»:

6. ԳԻՎԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԽՄԲԱԴՐՈՒՄՆ ՅԵՎ ՀԻՄ-  
ՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԵՐԸ ՊԱՀԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

29. Տիվալ տարվա դիմանական ցուցակը գերջայնելուց և  
յանկի մեջ մուծված առյաները ստուգելուց հետո, ցուցակը վե-  
րանայվում է Հիմնարկի պետի կողմից, վորը ցուցակում նշանա-  
կում է («Ծանոթություն» վանդակի մեջ) դիմանում թողնվող ա-  
մեն մի գործի հանդեպ՝ արխիվին չհանձնելու լրատճառը («Թող-  
նել գործը վճռված չըխնելու հետևանքով»), «Թողնել տեղեկանք-  
ների համար», «Հանձնված և այս ինչ հիմնարկին», և այլն), իսկ  
արխիվին հանձնելի գործերի հանդեպ, մեկնելով վարչական տե-  
սակետից, նշանակում է, թե պահել գործը թշնամութեամբ կամ վո-  
րոշ տարով և կամ այդ միանդամայն անսկետք և հիմնարկի հա-  
մար :

Ծանոթություն 1.— Ցուցակում անհրաժեշտ է «Ծա-  
նոթություն» վանդակի մեջ նշանակել, թե դիմանում  
թողնված գործն ինչ №-ով և մուծված հաջորդ տարվա դե-  
գանական ցուցակի մեջ:

Ծանոթություն 2.— Գործը հիմնարկի համար անպետք  
լինելու նշանառումն չպետք և հասկացվի այն լիմասոնով,  
թե գործը յենթակա յև վոչնչացման: Այդ նշանառման ի-  
մասմա այն և, վոր հիմնարկի շահերը թույլատրում են՝  
գործը անհապաղ հանձնելու կենտարխիվի տրամադրու-  
թյանը:

Ծանոթություն 3.— Հաշվետվությունների պահպան-  
ման ժամկետը չի կարող 10 տարուց պահեաս լինել:

30. Գործերն հիմնարկի արխիվին հանձնելու կամ դիմանում  
պահելու ինչպես և հիմնարկի արխիվին հանձնվող գործերի պա-  
հելու ժամկետները կամ անպետք ճանաչելու վորոշումները կա-  
րող են կայտցնել նաև հիմնարկի պետի կողմից նշանակված առ-  
ուանձին հանձնաժողովները, համապատասխան գործավարության  
վարիչների մասնակցությամբ. այդ հանձնաժողովներն իրենց  
աշխատանքների մասին կազմում են արձանագրություններ, վո-  
րոնք ներկայացվում են հիմնարկի պետին ի հաստատություն:

31. Ներկա կանոնների 28-րդ և 29-րդ կետերի մեջ նշված  
գեպքերում հիմնարկի պետն և նշանակված հանձնաժողովները

պարտավոր են դեկավարվել համապատասխան գերատեսչու-  
թյունների հրահանդներով այն մասին, թե ինչ կատեգորիաների  
գործերը յենթակա յեն կամ յենթակա չեն պահպանման և ի՞նչ  
ժամկետ ունեն պահպող գործերը:

32. Դիվանական ցուցակները ստուգելիս և հավաստագրե-  
լիս՝ արխիվին հանձնվող գործերի վրա մակագրում են նրանց  
անգետության կամ պահպանման ժամկետների մասին («ակտք  
չե պահել», «պահել մինչև այս ինչ տարեթիվն ներառյալ», «պա-  
հել մշտնչենապես»):

Ծանոթություն.—Հիվալ մակագրություններն արվում  
են շապիկի վերել ծախ կողմից: Գործի պահպանման առա-  
ջին տարին հաշվվում է այն տարին, վորը հետեւում է գոր-  
ծի ավարտման տարուն:

#### 7. ՀԱՆՁՆՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ

33. Վավերացված դիմանական ցուցակները մաքրագրվում  
են 3 որինակով, լավորակ թղթի վրա և համարվում են հանձնողա-  
կան ցուցակներ՝ գործերը հիմնարկի արխիվին հանձնելիս:

34. Հանձնողական ցուցակի մեջ պետք է նշանակվեն դիմա-  
նական ցուցակների համար սահմանված բոլոր տվյալները (տև-  
ան № 6):

Անավարտ գործերը ցուցակագրելիս՝ այն վանդակները, ուր  
նշանակվելու յեն նրանց ալվարտման ամսաթիվը, թերթերի քանա-  
կը և պահպանման ժամկետները, չեն լցվում: Հանձնողական ցու-  
ցակները ստորագրում են հիմնարկի պետը կամ համապատասխան  
լիազոր անձը:

35. Յեթե գաղտնի և վոչ գաղտնի գործերի համար տարվում  
ե մի ընդհանուր համարակալություն, վոչ գաղտնի գործերի  
հօնձնողական ցուցակների մեջ մուծվում են հերթական կար-  
գով նաև գաղտնի գործերի № №, ընդ վորում չեն նշանակվում  
տեղեկություններ նրանց մասին, այլ միայն նշվում ե՝ «գաղտնի»  
(որինակ՝ № 14 «գաղտնի»):

III.

ԳՈՐԾԵՐԻ ՀԱՆՉՆՈՒՄԸ ԴԻՎԱՆԻՑ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՐԽԻՎԻՆ

1. ՀԱՆՉՆՄԱՆ ՅԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԵՐՆ ՅԵՎ ՀԱՆՉՆՄԱՆ  
ԺԱՄԿԱՆԵՐԸ

36. Բոլոր հիմնարկներում դործերի հանձնումը հիմնարկի տրխիվին կատարվում և տարին մեկ անգամ, հիմնարկի պետք նշանակած ժամկետին, բայց վոչ ուշ քան 6 ամիս նախորդ դործառական տարին անցնելուց հետո (տես կետ 9-րդ և 1-ին ծառնթությունը) :

37. Հիմնարկի արխիվին հանձնվելու յեն բոլոր ավարտած դործերը, մատյաններն և այլ դործավարական նյութերը, վորոնք մուծված են անցյալ տարվա դիվանական ցուցակի մեջ (տես 9-րդ կետը), բացառությամբ այն դործերի, վորոնք անհրաժեշտ են հիմնարկի հետագա ընթացիկ աշխատանքներին. նմանապես հանձնվելու յեն նախորդ տարիների այն դործերը, վորոնք թուղթի ելին դիվանում անտովարտ կամ ընթացիկ աշխատանքին անհրաժեշտ լինելու հետևանքով, բայց վորոնք այժմ հերթական տարեկան հանձնման ժամկետին արդեն ավարտված են, կամ այլևս անհրաժեշտ չեն ընթացիկ դիվանական աշխատանքներին :

Ծանոթություն.— Յեթե հիմնարկում անցյալ դործառական տարվա ընթացքում գին կնիքներն ու շտամպերը փոխվել են նորերով, ապա արխիվին հանձնվելու յեն նաև գին կնիքներն ու շտամպերը համապատասխան հանձնողական ցուցակով :

2. ԳՈՐԾԵՐԻ ՀԱՆՉՆՈՒՄԸ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՐԽԻՎԻՆ:

38. Հիմնարկի արխիվին հանձնելի դործերն և այլ նյութերը պետք են պասպորտած լինեն ըստ իրենց դիվանական №№-ի, համաշխի կապուկներով, վորոնք ունենալու յեն հատուկ պիտօքներ (յարվիկ), վրան նշանակված՝ հիմնարկի անունը, բաժինը, վորոնք պատկանում են պարունակված դործերը և, ապա, այդ դործերի տարեթիվն ու №-ները (տես ձեռ № 7) :

Ծանոթություն.— Դործերի սովորական մեծություն  
38×25 սմմ. դեպքում կապուկների հաստությունը չպետք

ել լինի 20 սմմ. ավելի : Պարանի տակ այստեղ, ուր նա կապած ե կողերին, անհրաժեշտ և մտցնել կարտոնից կամ մեքանի ծալ հաստ թղթից ժաղալվեններ, վորպեսզի գործերն առահանով լինեն վիշտումից :

39. Նախընթաց տարվա հանձնելի բոլոր դործերի հետ միասին հիմնարկի արխիվին ներկայացվում են հանձնողական ցուցակների բոլոր 3 սրբակները, վորոնք պատրաստվել են սույն կանոնների 33—35 կետերի համաձայն: Այդ հանձնողական ցուցակների վրա ուխիվանի կողմից չպետք ե զրգեն №-ներ :

40. Հիմնարկի արխիվի վարիչը ստուգում է հանձնելի նյութերը հանձնողական ցուցակներով, նայելով յուրաքանչյուր դործը (բացի գաղտնիներից) և հավաստելով, վոր այդ դործերը կանոնավոր են պատրաստված հանձնման համար (տես սույն կառանելի 2-րդ հատվածը) :

Ծերություն ընթելու գեղքում, արխիվի վարիչն ստորագրում է դործերն ընդունելու մասին բոլոր հանձնողական ցուցակներում. այնուհետև նա հանձնողական ցուցակները նշանակում են ցուցակների մատյանի մեջ (տես 52-րդ կետը) հերթական №-ով և այդ №-ը նշանակում ե թվանշանով ու տառերով հանձնողական ցուցակների յուրաքանչյուր որինակի վրա, վորոնցից մեկը վերադարձվում է հանձնող դործավարությանը, մյուսն ընդգիւտ մնում է արխիվում, իսկ յերրորդը պահպան ե, մինչեւ վոր համապատասխան դործերի հետ իր ժամանակին կհանձնվի կենտրոնիվին:

Ծանոթություն.— Հանձնողական ցուցակի №-ը արխիվի վարիչը նշանակում է նաև արխիվին ընդունած կապուկների պիտօքների վրա:

41. Ավելի կանուխ տարիների դործերը, վորոնք մնացել են գիվաններում և միաժամանակ հանձնվում են անցյալ տարվա դործերի հետ (տես 37-րդ կետ), ներկայացվում են արխիվին այս տարի հանձնողական ցուցակների հետ միասին:

42. Նու երես հոդվածում հիշված դործերն ընդունելիս՝ արխիվի վար ատարում և ստուգում սույն կանոնների 40-րդ կետի համ:

43. Ե արծերի հանձնման ընթացքում պարզվի, վոր դործերի համ հանձնողական ցուցակներին վերաբերյալ կա-

Նոնները չեն պահպանված, ընդունելությունն դադարեցվում է՝  
մինչև վոր նկատված թերությունները դիմումից շակելն,  
վարպետի շտկումը կատարվելու յե վոչ ավելի քան մեկ ամ-  
սում:

44. Յեթե դիմումը հրաժարվի ուղղել հանձնելի գործերում և  
ցուցակներում հայտարերված թերությունները, արխիվի վարչչու-  
այդ մասին կազմում և արձանագրություն, մանրամասն նշելով  
բոլոր նկատված թերություններն և առդիր գեկուցագրով ներկա-  
յացնում ե ի տնօրինություն հիմնարկի պետին, վորն և կարգա-  
դրում ե դիմումին ուղղել այդ թերությունները:

#### IV.

### ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸԸ, ՏԵՂԱՎԱՐՈՒՄՆ ՅԵՎ, ԱՅ- ՎԱՌՈՒՄԸԸ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՐԽԻՎՆԵՐԱՒՄ

#### 1. ՀԻՄՆԱՐԿԻ ԱՐԽԻՎԻ ՎԱՐՉԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱ- ԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

45. Հիմնարկի արխիվի վարչի պարտականությունն են  
պահպանել արխիվ ընդունած նյութերը, պահել այդ կարգա-  
վորված դրություն մեջ, կատարել բոլոր արխիվատեխնիկական-  
աշխատանքներն և այլ միջոցառումները, վորոնք նախատեսված  
են կենտրոնիվի կանոններով և ի լրումն սրանց հրապարակված-  
կանոններով և ավյալ հիմնարկի կամ սրա վերադաս մարմնի  
կարգադրություններով ու հրահանգներով. ներկայացնել հիմ-  
նարկի պետին տարեկան հաշվետու գեկուցագրեր՝ արխիվում կա-  
տարած աշխատանքների մասին. միջոցներ ընձեռնել հնարավոր  
հարմարություններ ապահովելու տվյալ հիմնարկին՝ արխիվում  
պահպան նյութերից ոգտվելու համար:

#### 2. ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵՂԱՎԱՐՈՒՄՆԵՐԸ

46. Հիմնարկի արխիվին հանձնված դորձերն և այլ նյութե-  
րը գետեղվում են առանձին, ըստ յուրաքանչյուր բաժնի և գոր-  
ծավարության, հանձնողական ցուցակների հաջորդականությամբ  
և պահպանելով այդ ցուցակներում նշանակված դորձերի, մա-  
տայանների և այլն ՆԵ-ների կարգը:

Ծանոթություն. — Զանազան հիմնարկների արխիվա-  
յին նյութերը համախմբող արխիվներում յուրաքան-

չյուր հիմնարկի նյութերը տեղափորվում են առանձին, պահպանելով սույն կետում նշված պարմանները:

47. Լով պահելու և դյուրին գտնելու նպատակով՝ գործերը  
պետք ե տեղափորվեն կապուկներով, վորոնց վրա ամրացված են  
մինում պիտակներ (յարլիկներ. տես կետ 38). կապուկները զե-  
տեղվում են պիտակների վրա նշված համարների կարգով:

Ծանոթություն. — Հիմնարկների արխիվները, վորոնք  
կիրարկում են գործերը ուղղահարաց ձևով պահելու սխա-  
տեմը, կարող են գործերը պահել վոչ թե կապուկներով,  
այլ ուղղահարաց զետեղման պահարաններում:

48. Արխիվային պահպանների ու գարակականների վրա  
պարզուու նշանակվելու յեն № № այն կարգով, վորով նրանք ահել  
են բոնում արխիվի չենչում:

Ծանոթություն. — Հարակակալների ու պահպանների  
համարակալուն պետք ե անել ձախից գետի աջ, իսկ դա-  
րակների համարակալուն՝ թե պահպաններում և թե  
գարակակալներում՝ վերից-վար:

49. Պահպանների ու գարակակալների № №-ները, յեթե  
անհրաժեշտ ե նաև գարակներինը, ուր զետեղված են այս կամ  
այն նյութերը, պետք և մատիտով նշվեն հանձնողական ցուցակների մատյանի «Ծանոթություն» վանդակում (տես ստորև կետ  
52 և հաջ.), յերբ արդեն մուծված լինեն մատյանի մեջ այդ նյու-  
թերի համապատասխան հանձնողական ցուցակները:

Ծանոթություն. — Ժամանակավորապես վերցրած դոք  
ծերի, մատյանների և այլ նյութերի տեղը պետք ե զնել  
նշանակ, ուր զրված ե լինելու վերցված նյութի №-ը,  
յե՞րբ և ո՞վ ե վերցրել և յե՞րբ ե վերադարձելու:

50. Վորպեսով արխիվային նյութերը չփչանան և լրացուցիչ  
կարգով ընդունված նոր գործերն ու վավերագրերը տեղափորելիս՝  
դժվարություններ չառաջանան, անհրաժեշտ ե խուսափել այդ  
նյութերը իմաց զետեղերուց, թողնելով միշտ պահեստի վորոշ տեղ  
հետազա ստացումների համար. նմանապես պետք ե տեղափորել  
նյութերը գարակների վրա յերկու կարգով:

51. Արխիվային գործերը հարմար տեղավորելու նկատառու-  
մով, նպատակահարմար ե զարակները պահպաններում և դա-

բակականերում շինել իրարից 40 սանտիմետր հեռավորությամբ  
և 40 սանտ. խորությամբ, իսկ յերկարությունը լինելու յէ սան-  
տիմետրների այսպիսի թվով, վոր բաժանվի 25-ի (դործի շաղկի  
լույսությունը) :

### 3. ՀԱՆՉՈՂԱԿԱՆ ՑՈՒՅԱԿՆԵՐԻ ՄԱՏՅԱՆՔ

52. Հիմնարկների արխիվները մանր քոլոր նյութերի հաչ-  
վառման և աեղեկանքներ հանելու դյուրության նորատակով յու-  
րաքանչյուր արխիվում պետք և ունենալ հանձնողական ցուցակ-  
ների մատյան (տես ձև № 8), վոր պետք և ժապավենված ու  
համարակալված լինի, հիմնարկի պետի ձեռքով վավերացված և  
կաղմի մեջ ամփոփված :

Ծանրությունն.— Համախմբված հիմնարկների միա-  
ցյալ արխիվներում հանձնողական ցուցակների մատյանները  
յուրաքանչյուր հիմնարկի համար լինելու յէն առան-  
ձին :

53. Ցուցակների մատյանի համար սահմանվում և գրաթղթի  
վեռթեանոց օրարտաղիք ձև : Հանձնողական ցուցակները  
պրանցվում են մատյանի մեջ, հաջորդաբար նրանց միջն թողնե-  
րով 5 և ավելի (նայած անհրաժեշտության) տող հետադա լրա-  
ցուցիչ նշանառումների համար : Մատյանի մի եջի վրա գրանց-  
վելու յեն վոչ ավելի, քան 4-5 հանձնողական ցուցակներ :

54. Ցեթե հիմնարկի մեջ կան 2 և ավելի բաժիններ իրենց  
առանձին գործաշարություններով, այն ժամանակ հանձնողական  
ցուցակների մատյաններն ել պետք և բաժանված լինեն նույնքան  
մասերի, վորքան ունենալու յեն իրենց հերթական համարը 1-ին  
մաս, 2-րդ մաս, 3-րդ մաս և այլն) և համապատասխան բաժնի  
անունը : Ցուցակների մատյանի յուրաքանչյուր մասում հանձնողական ցուցակների համարաթիվը տարբում և առանձին, սկզ-  
ած № 1-ից :

Ծանրություն 1.— Ամբողջ մատյանը կամ նրա վո-  
րեւ մասը լրանալու դեպքում կազմվում և մատյանի յերկո-  
րորդ հատորը, բաժանված նույն մասերի, ինչպես և ա-  
ռաջին հատորը :

Ծանրություն 2.— Ցուցակների մատյանները, վո-  
րոնք, համաձայն սույն կետի, բաժանված են մասերի՝

պետք ե սկզբում առանձին եջի վրա նշանակված ունենան  
բոլոր մասերի անուններն ու համապատասխան թերթերի  
թվերը:

55. Ցեթե վորեւ բաժանմունքից հիմնարկի արխիվն են մըտ-  
նում թե գաղանի և թե վոչ-գաղտնի բնույթի նույթեր, ապա  
դաղմի գործերի հանձնողական ցուցակը գրանցվում և ցուցակ-  
ների մատյանի մեջ նույն թվականի վոչ—դաղմի գործերի հանձ-  
նողական ցուցակից անմիջապես հետո, առանց ունենալու իր հեր-  
թական №-ը, զրում և նույն համարով, ինչ №-ով զրանցված եւ  
վոչ-գաղմի գործերի ցուցակը, միայն ավելացվում և «գաղտնի»  
բառը (№ 1 գաղտնի):

56. Ցեթե հանձնողական վորեւ ցուցակի համաձայն, լրա-  
ցուցիչ կերպով հանձնվում են այնպիսի գործեր, վորոնք իր ժա-  
մանակին վորեւ պատճառով չեցին հանձնվել արխիվին, ապա ցու-  
ցակների մատյանում այդ հանձնողական ցուցակի նախկին ուր-  
բանցման տակ համապատասխան վանդակներում լրացուցիչ կեր-  
պով նշանառվում և այդ ցուցակով նոր մասով գործերի թիվն և  
հանձնման ժամանակը:

57. Հիմնարկների բաժինների անվանափոխության դեպքում  
վերանվանված բաժինների հանձնողական ցուցակները շարու-  
նակվում են զրանցվել ցուցակների մատյանի նույն մասում, ինչ-  
պես վերանվանումից առաջ :

Ցեթե հիմնարկի մեջ կազմակերպվում և մի նոր բաժին, ապա  
ցուցակների մատյանում բաց և արվում նոր բաժնի անունով և  
հաջորդ թվով մի նոր մաս, վորի համար, յեթե մատյանում ա-  
զատ տեղ չկան և պետք և կազմել 2-րդ հատոր :

58. Ցուցակների մատյանը նաև բոլոր հանձնողական ցու-  
ցակները պահպանվում են կողպեքով փակած և մյուս նյութերից ա-  
ռանձնացված : Ցուցակների մատյանը վոչ մի զեղքում արխիվից  
զուրս չի արվում :

4. ՀԽՄՆԱԲԿԻ ԱՐԽԻՎԸ ՄՏՏՆՈՂ ԴԻՊԱԾԱԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ  
ՀԱՇՎԱՌՈՒՄՆ

59. Զանազան զրավոր, տպագիր կամ գծագրային նյութեր,  
այն և—ձեռագրեր, քարտեզներ, հատակագծեր, սխեմաներ, նը-

կարներ, ոլլակտոտներ, հայտարարություններ և այլն, վորոնք հանձնվում են Հիմնարկի արխիսլին տարեկան հանձնողական ցուցակներից գուրս, թե Հիմնարկի բաժինների և թե նրա առանձին պաշտոնատար անձերի կողմից, դրանցվում են դիպվածական ստացումների համար հասուլ ժամկային յալ ինվենտարային մարդու մեջ (տես ձև № 9):

Ծանոթություն.—Դիպվածական ստացումների ինվենտացային մատյանի հաջորդական № №-ները չարունակում են անընդհատ՝ Հիմնարկային արխիսի գոյության ամբողջ ընթացքում:

60. Դիպվածական ստացումների ինվենտացային մատյանի մեջ նշանակված №-ը, վորով գրանցվում և ստացված նյութը, նշանակվում են առև այդ ստացված նյութի և այն գավերագրի վրա, վորի Հիման վրա ստացվել և այլրազ նյութը: Յերկու գնորդումն ել այդ №-ը նշանակվում և «ինվենտարային» բառի համեմով (որինակ՝ «ինվենտարային № 25»):

### 5. ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՐԽԵՒՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

61. Հիմնարկի արխիսի ընթացիկ գրազրությունները դատավորվում են և կարգում զործերին՝ համաձայն սովորական կանոնների, և այդ դործերն ըստ իրնոց հերթական № №-ի գրանցվում են հատուկ մատյանի մեջ, վոր կրում և այս խորագիրը՝ «Յուցակ այս ինչ Հիմնարկի արխիսի ընթացիկ գործերի»:

#### V

### ԱՐԽԵՎԻ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԱՐԽՎԱՑԻԿ ՆՅՈՒԹԵՐԻՑ ԲԳՏՎԵԼԻ

1. ՊԱՏՃԵՆՆԵՐ, ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ՈՒ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ  
ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԵՐԻ ԴՈՒՐՍ ՏԱԼ  
ԱՐԽԵՎԻՑ

62. Հիմնարկի արխիսի պահվող գործերից և այլ նյութերից պատճեններ ու քաղվածքներ հանելու կամ տեղեկանքներ պատրաստելու աշխատանքն պարտավոր և կատարել վոչ թե արխիսի վարիչը կամ աշխատակիցն, այլ Հիմնարկի համապատասխան բաժինը:

63. Հիմնարկի արխիսի պահվող գործերն ու նյութերը գուրս են արվում՝ պատճեններ, քաղվածքներ ու տեղեկանքներ հանելու համար շահագրգուփած Հիմնարկի բաժնին՝ սրա վարչի թույլավությամբ և այդ մասին նշանակվում է հատուկ մատյանում:

64. Հիմնարկի մի բաժնի վերաբերյալ զործերն ու նյութերը կարող են հանձնվել մի այլ բաժնին միմյանց Հիմնարկի պետք թույլավությամբ:

65. Յուցակներն ու քարտերը Հիմնարկի արխիսի չենքից վոչ վորվն գուրս չեն տրվում, տեղեկանքներ հանել թույլ և արվում միայն տվյալ Հիմնարկի պաշտոնատար անձերին, Հիմնարկի պետի տնօրինությամբ, արխիսի ստուգելու իրավունք ունեցող անձերը կարող են ոգտվել ցուցակներից ու քարտերից, նույն Հիմնարկի պետի թույլավությամբ:

66. Պահանջված զործերը գուրս տալուց առաջ արխիսի վարձը պետք և զնի գործերն և ստուգի, թե արդյոք այն գրանցված և համապատասխան ցուցակում, համարակարգված են թերթերը և արդյոք այդ թերթերի քանակը նշանակված և գործի վերջում համապատասխան վավերացումով:

67. Գործը ստացող անձնավորությունը նույնպես պարտավոր և ստուգել թերթերի համարակարգությունն և ապա ստորագրում և համապատասխան մատյանում ստացման մասին:

Ծանոթություն.—Գործերի և այլ նյութերի չափելու վրա անպայման պետք և գրում վածքածիւ լինի արխիսի շտեմակելը (ձև № 10):

68. Արխիսի վերցրած զործերի ամբողջության ու պահպանության պատասխանականությունն ընկնում է Հիմնարկի նյութերը պահանջող պաշտոնատար անձերի վրա:

69. Արխիսի վերցրած զործերն և այլ նյութերը գուրս տակ նել Հիմնարկից տուն և այլուր չի թույլավություն:

### 2. ԱՐԽԵՎԻՑ ՎԵՐՑՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ.

70. Գործերն և այլ նյութերն արխիսի գուրս են արվում Հիմնարկի բաժիններին վոչ ավելի, քան մեկ ամիս ժամանակով:

Նշանակված ժամկետն անցնելուց հետո արխիսի վարչը Հիմնարկից տեղափոխ և համապատասխան բաժնին՝ վերցրած զործը վերա-

գարձնելու մասին։ Հիշեցումից յերկու շաբաթ անցնելուց հետո՝ զործը չվերադարձնելու ղեղջում, արխիվի վարիչն այդ մասին հայտնում և հիմնարկի պետին ի տնօրինություն։

71. Վերադարձվող գործը ստանալիս՝ արխիվի վարիչը պարտավոր և ստուգել, վորպեսզի գործը վերադարձված լինի նույն վիճակում, ինչպես հանձնված և յեղել. ի հաստատումն գործի վերադարձման, արխիվի վարիչը նշանակում և համապատասխան մատյանում։

72. Յեթև նկատվի վերադարձված գործի փչացումը կամ թերթերի, վավերագրերի ու հավելվածների կորուսոն և այն արխիվի վարիչն այդ մասին կազմում և գործը հանձնողի ներկայությամբ արձանագրություն յերկու որինակով, փորից մեկը ներկայացվում և հիմնարկի պետին, հանցավորին պատշաճ պատասխանատվության յննթարկելու համար, իսկ մյուս որինակը պահպատ և արխիվի ընթացիկ գործերում։

Իսկ յեթև ամբողջ գործը կորել և, արխիվի վարիչը կաղամում և արձանագրություն յերկու որինակից և հանձնողական ցուցակի «Ծանոթություն» վերտառությամբ վանդակում նշանակում և այդ կորսոտի մասին նաև արձանագրության №—ն ու ժամանակը. արձանագրության մեկ որինակը ներկայացվում և վերսէիցար նպատակով հիմնարկի պետին, իսկ մյուս որինակը պահպատ և արխիվի ընթացիկ գործերում։

73. Վերադարձված գործերի ու նյութերի ստացման մասին համապատասխան մատյանում նշանառումներ անելուց հետո այդ նյութերն անհապաղ դրվում են իրենց տեղը։

3. Գրությաների ՈՒ ՎԱՎԵԲԱԳՐԵՐԻ ՀԱՆՈՒՅԹԸ ՀԻՄՆԱՐԿԻ ԱԲԽԱՎՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԳՐՐԾԵՐԻՑ։

74. Հիմնարկի արխիվում պահպող գործերից կարված վորեն գրություն կամ վավերագրեր հանել, թեկուղ կարծառե ողտագործման համար, չե թույլատրվում։

Ծանոթություն. — Հիմնարկի արխիվում պահպող գործերից կարելի յե հանել, բացառության կարգով, և հանձնել տերերին միմիայն անձնական վավերագրերն, այս ե՝ վկայականներ ուսման, սոցիալական ծագման և այլն վավերագրերի հանումն և հանձնումը կատարվում և հիմ-

նարկի պետի գրավոր թույլատրությամբ։ Հանված վագիր բաղերի տեղը պեսք և զնել այդ վավերագրերի պատճենը՝ արխիվի վարչի ձևություն հաստատված և մակարությամբ այն հիմքի, վորով գորս և հանվել տվյալ վավերագրերը և թե յե՞րբ և հանվել ու հանձնվել սեփականատիրութը, նըմանապես և վերջինի ստորագրությունը՝ ստացման մասին։ Այսուհետեւ համապատասխան հանձնողական ցուցակում և գործի շապիկի վրա պետք և նշանառնել տվյալ վավերագրի համույթի մասին։

4. ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՅԹԸ ՀԻՄՆԱՐԿԻ ԱԲԽԱՎՈՒՄ ԱՅԼ ՀԻՄՆԱՐԿԻ ԱԲԽԱՎՈՒՄ ԱՅԼ ՀԱՄԱՐ

75. Բացառիկ գեղագիրում կարելի յե նյութերը մի հիմնարկի արխիվից հանձնել ժամանակավոր ովտագործման համար մի այլ հիմնարկի, բայց միայն կարեռագույն պաշտոնական անհրաժեշտության գեղագրում և այն ել համապատասխան բարձր վերատեսչական հիմնարկի թույլատրությամբ։

ԾԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ. — Վերսէիցար գործերի թե հանձնման և թե՛ վերադարձման հետ կարված բոլոր ծափերը կատարվում են ի հաշիվ այն հիմնարկի, փորին հանձնվում են նյութերը։

76. Աւրիշ հիմնարկին հանձնելի նյութերը արխիվի վարիչը հանձնում և ստացող անձին, յերբ սա ներկայացնում և պատշաճ թույլատրություն այն հիմնարկի պետից, վորին պատկանում և գորս տրվող նյութը։ Հիշյալ թույլատրությունը մնում և արխիվում և կցվում և արխիվի համապատասխան ընթացիկ գործին։

77. Սույն կանոնների 66-րդ և 67-րդ կետերում նշված պահանջներից բացի՝ արխիվի վարիչը ուրիշ հիմնարկի ներկայացուցչին նյութեր հանձնելիս՝ կաղմում և յերկու որինակ արձանագրություն, նշանակելով մի առ մի հանված նյութերը, նրանց վերադարձի ժամկետն և հանձնման հիմունքները։ Աքանագրության մեկ որինակը պահպատ և արխիվում, իսկ մյուսը ուղարկվում և (բայց վոչ այն անձի միջացով, վորն ստանում է նյութերը) այն հիմնարկին, վորին գորս և արված այդ նյութերը, խնդրելով, վոր վերջինս հաղորդի արխիվի այդ նյութերի ստացման մասին։

ԳՈՐԾԵՐԻ ՀԱՆՉՆԱԽՄԸ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՐԽԻՎՆԵՐԻՑ  
ԿԵՆՏԱՐԱԿՆԵՐԻՆ

1. ՀԱՆՉՆՄԱՆ ՅԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԵՐՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

78. Այն արխիվային նյութերը, վորոնց պահելու ժամկետը հիմնարկներում լրացել է (տես կետ 2-րդ և ծանոթությունը), վերջինները հանձնվում են Կենտրարխիվին ու նրա համապատասխան մարմիններին։ Այդ հանձնումը կատարվում է տարին մեկ անգամ, ընդվորում հանձնման ժամկետը վորոշվում է տվյալ հիմնարկի և Կենտրարխիվի մարմնի փոխադարձ համաձայնությամբ և հանձնվում են Հիմնարկի բոլոր բաժինների գործերը միաժամանակ։

79. Կենտրարխիվին արխիվային նյութերը հանձնելու գործում պլանաշափություն պահպանելու նպատակով, անհրաժեշտ և վորոշ տարիների (որպատճառային կամ բյուջետային) գործերը հանձնելիս՝ միջացներ ձեռնարկել, վորոշվողի հանձնվեն ըստ կարելույն այդ տարվա բոլոր գործերի։ Այդ նպատակով արխիվի վարիչը արխիվային նյութերը հանձնելուց առաջ հարցնում է Հիմնարկի բաժիններին, թե արդյոք վոչ մի արգելք չկա՞ տվյալ տարվա գործերի հետ հանձնել նույն այն գործերը (մի առ մի թվերով նրանց № №-ը), վորոնց ավարտումից դեռևս չի անցել 10 տարի։

Ծանոթություն. — Տվյալ տարվա գործերի հետ միասին հանձնվում են համապատասխան հանձնողական ցուցակներով նախոնթաց տարիների այն գործերը, վորոնք մնացել են արխիվում կամ Հիմնարկի բաժիններում նախոնթաց հանձնումների ժամանակից և այժմ յենթակա յեն հանձնվելու Կենտրարխիվին։

80. Հիմնարկում գործերի 10 ամյա պահելու ժամկետը հաշվիս հաշվի չեն առնում—ա) գործերի ավարտման տարին և բ) Կենտրարխիվին հանձնելու տարին։

2. ԳՈՐԾԵՐԸ ԿԵՆՏՐԱՐԱԿՆԵՐԻՆ ՀԱՆՉՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

81. Հիմնարկի արխիվից նյութերի հանձնումը Կենտրարխիվին կատարվում է նույն հանձնողական ցուցակներով, վորոնցով այդ

նյութերը ստացել եր հիմնարկի արխիվը։ Յեթե այդ հանձնողական ցուցակները վշացել են կամ դժվար ընթեռնելի յեն, հանձնավում են նրանց պատճենները։ Հիմնարկի արխիվի կողմից նյութերի հետ միասին Կենտրարխիվի ներկայացված յուրաքանչյուր հանձնողական ցուցակի 2 որինակից մեկը, նյութերը ընդունելուց հետո, վերադարձվում է ստացման մակարդաւթյամբ հիմնարկի արխիվին, իսկ մյուսը մշտապես պահելու համար թողնվում ե Կենտրարխիվի համապատասխան մարմնում։

82. Կենտրարխիվում պահպակի հանձնողական ցուցակների որինակները (Հիմնարկի բոլոր բաժիններից հերթական հանձնելի տարվա) պետք է կարգեն միասին։ առաջին ցուցակի սկզբում դետեղլում է կարգած ցուցակների ցանկը հիմնարկի արխիվի վարչի ստորագրությամբ։ Այդ ցուցակի մեջ նշված է լինելու, թե Հիմնարկի վո՞ր բաժիններին են պատկանում ցուցակներն և Վո՞ր թերթերի վրա յեն նրանք դանդում։

Ծանոթություն. — Նախկին տարիներից հանձնվող գործերի չորսականը (տ. կետ. 79, ծանոթ.) և տվյալ ցուցակների յերկրորդ տարիները չեն կարգում, վորոշվեան վերադարձվելու յեն Հիմնարկի արխիվին։

83. Նյութերն և ցուցակները Կենտրարխիվի մարմիններին ուղարկելիս՝ միաժամանակ ուղարկում են Հիմնարկի արխիվի վարչի ստորագրությամբ նաև հանձնվող գործերի ցուցակներին և №-ի ցանկը։

Այդ ցանկը միևնույն ժամանակ ծառայում է վորպես ցուցակ՝ արկղների կամ պարկերի մեջ պարզակիւմ գործերի, և պատրաստվում է Յ որինակով։ Ցանկի մեջ նշվում են հանձնելի ցուցակներն ու գործերի համարները, Հիմնարկելով ըստ յուրաքանչյուր տարվա ցուցակի, թե ի՞նչ № №-ով, Հիմնարկի ի՞նչ բաժիններ, ի՞չ № №-ի գործեր են հանձնվում և ի՞նչ № №-ով նրանք դանդում են արկղների կամ պարկերի մեջ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Ցանկերի բոլոր Յ որինակների վրա արխիվի վարիչը դնում է հաջորդական կարգի № (սկսելով № 1-ից)։ Ցանկի այդ համարակալությունը շարունակվում է մինչև Հիմնարկի արխիվի գոյության վերջը։

84. Հանձնվող նյութերն ընդունելուց և ստուգելուց հետո, կենտրարխիվի մարմնի համապատասխան ներկայացուցիչը, բացի իր ստորագրություններից հանձնողական ցուցակների յերկուրդու որինակների յուրաքանչյուրի վրա, նաև տալիս և ստանալու իր ընդհանուր ստորագրությունը՝ ներկայացված ցանկի յուրաքանչյուր որինակի վրա, վորն այդպիսով ծառայում է վորպես հանձնման ընդհանուր արձանագրություն։ Ցանկի մեկ որինակը մասնաւում է կենտրարխիվում, իսկ մյուսը հանձնողական ցուցակների տերիրորդ որինակների հետ միասին վերադարձվում է հիմնարկի արխիվին, վորաեղ իր հաջորդական կարգի №-ով այդ կցվում է «Հանձնողական նյութերի ցանկերը» վերագրով հատուկ գործին, իսկ յերրորդը ներկայացվում է հիմնարկի արխիվի վարչի գեկուցադրով՝ հիմնարկի պետին։

85. Պորձերի հանձնումը վերջանալուց հետո հիմնարկի արխիվի վարիչը ցուցակների մատյանում «Մանություն» վանդակի մեջ նշանառում և նյութերը կենտրարխիվին հանձնելու մասին։

86. Յերբ, արխիվային նյութերը կենտրարխիվին հանձնելու, պարզվի, վոր հանձնող նյութերի վերաբերմամբ չեն կատարվել սույն կանոնների 22-25 կետերում նախատեսված պահանջները, նյութերի ստացումն դադարեցվում է։ Այլպիսի անբավարար վիճակում նյութերը ներկայացնող հիմնարկը պարտավոր է, կենտրարխիվի պահանջով, հետ վերցնել այդ բոլորն իր ծախքով և վերստին ներկայացնել 6 ամսոց վոչ ուշ՝ կարգավոր զած վիճակում։

### 3. ԱՐԽԻՎԻ ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԿԵՆՏՐԱՐԽԻՎԻՆ

87. Հիմնարկի արխիվի ընթացիկ գործերը (գրություններ հիմնարկի բաժինների, կենտրարխիվի հետ և այլն) հանձնվում են կենտրարխիվի մարմիններին, համաձայն սույն կանոնների 81-84 կետերի, յերկու որինակ հանձնողական ցուցակներով, միաժամանակ տվյալ հիմնարկի նույն տարիվ բոլոր գործերը հանձնելու։

88. Ցուցուկների մատյանը, դիմվածական ստացումների ինվենտարային մատյանն և արխիվի ընթացիկ գործերի ցուցակը, նմանապես արխիվային ինվենտարային ցուցակներն ու քարտարանները, նաև արխիվին պատկանող հանձնողական ցուցակներն

և այդ ցուցակների ցանկերը հանդիրձ ստորագրություններով պետարխիվի մարմիններին հանձնված նյութերի մասին-հանձնելում են կենտրարխիվին, յերբ տվյալ հիմնարկը միաժաման լուծարվի յեւ յենթարկվում։

### 4. ՀԱՆՁՆՎԱԾՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԲԵՐԵԼԸ ԿԵՆՏՐԱՐԽԻՎԻ.

89. Կենտրարխիվին կամ սրա մարմիններին հանձնվող արխիվային նյութերը բերվում են նշանակված տեղը՝ հանձնող հիմնարկի միջաներով և հատուկ աշխատակցի ուղեկցությամ, վորպատճենականությունը յեւ ուղարկվող նյութերի անվանք հասցնելու համար։

90. Կենտրարխիվին ուղարկվող նյութերը պետք է զետեղված լինած արկղների կամ պարկերի մեջ, վորոնց յուրաքանչյուրի վրա նշանակվելու յեւ ուղարկվող հիմնարկի անունը և արկղների № №-ն ըստ կարգի։

Ծանրությունն. — Արկղները կամ պարկերը պետք են լինեն բավարար ամրության և նյութերը նրանց մեջ լինածքով գարսկած, արկղների ծավալը պետք է լինի վոչ տվյալի քան 45 սնմ. լայնության, 70 սնմ. բարձրության և 105 սնմ. յերկարության։

### VII

## ԱՐԽԻՎՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԻՄՆԱՐԿԻ ԼՈՒԾԱԲՔԻ ԿԱՄ ԱՐԽԻՎԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԴԵՊՔՈՒՄ

91. Վորեւ հիմնարկի լուծարքի գեկում նրա արխիվում պահպաղ բոլոր նյութերն և գիլանի բոլոր ավարտած ու անվարտ գործները, ցուցակներն ու մատյանները, քարտեզները և բոլոր կնիքներն ու չտամադերը լուծարքային հանձնաժողովը հանձնում է կենտրարխիվի մարմիններին պատշաճ հանձնողական ցուցակներով, ընդ վորում կազմում և արձանագրություն, վորի մեկ որինակը լուծարքային հանձնաժողովի կողմից ներկայացվում է համապատասխան դերատեսչական մարմին, վորին յենթակա ևր հիմնարկը, իսկ մյուս որինակը մնում է կենտրարխիվում։

92. Յեթե հիմնարկի լուծարքով նրա Փունկցիաները փո-

Խանցվում են մի այլ հիմնարկի, այն ժամանակ կուծարքային Հանձնաժողովը հանձնում է վերջին միայն ընթացիկ տարվա գործադրության նյութերն ու Հաջողակահական և այլ ժամանակները, իսկ մնացյալ արխիվային գործերի վերաբերմամբ վարչում և համաձայն նախորդ կետի: Գիլանական ընթացիկ գործերը նոր հիմնարկին հանձնելիս՝ կազմվում է այդ մասին արձանագրություն և հանձնողական ցուցակներ շահան որինակով, վորոնցից մեկը հանձնվում և փոխանցող հիմնարկին, իսկ մյուսը մնում է Կիմնարխիվի գործերում:

93. Հիմնարկի արխիվի վարչի փոփոխումով՝ նույն պաշտոնին նորեկ անցնողն ընդունում է իր նախորդից բոլոր արխիվային նյութերը, ստուգելով՝ յեղած ցուցակների հիման վրա և կազմելով Յորինակ արձանագրություն, վորից մեկը հանձնվում է նախկին վարչին, յերկրորդը՝ պահպամ և արխիվի ընթացիկ գործերում, իսկ յերրորդը ներկայացվում է հիմնարկի պետին:

### VIII

## ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱԲԽՈՎՅՈՅԻՆ ՇԵՆՔԵՐԸ

94. Արխիվների ընքում իներու յեն բավարար քանակով պատուհաններ և սղանցքներ, վոր բացվում են ձմեռը սենյակը մաքրելիս, իսկ ամառը, չոր յեղանակին՝ աշխատանքի ամրող որվա ընթացքում:

95. Արխիվային չենքում, վորաեղ զետեղված են արխիվային նյութեր, չորտք և լինեն յերկաթե վառարաններ և յերկաթե ծխախողովակներ:

96. Արխիվային նյութերի զետեղարաններում լուսայորության համար բնալ չի կարելի գործածել մոմեր կամ նալթի լամպեր, նաև խառարակությունը և ծխելը: Ելեկտրական լուսայորության լարերը պետք են մեկուսացված լինեն ապահով խողովակներով:

97. Արխիվային չենքը պետք են ապահովել զանազան լինասատուներից—միներից, ցեցերից, ճանձերից, թիթեռներից, մրջուններից և այլ միջաւաներից: Արխիվային զետեղարաններում արդել վում և պահել արխիվային գույքին չվերաբերող իրեր, մանավանդ ուտելիքներ:

98. Անհրաժեշտ է համախակի մաքրել, մանավանդ ամտուր:

արխիվի զետեղարանը թաց փայտաթեփով կամ լաթով, իսկ դարակներից փոշին սրբել խողանակով կամ չոր լաթով:

99. Արխիվի չենքի արտաքին գուան բանալին պահպամ և արխիվի վարչի մոտ, վարն անձամբ հսկում է սենյակի բացելուն աշխատանքի սկզբին և փակելուն՝ աշխատանքի ավարտին: Ներքին դռների, պահարանների ու սեղանների բանալիները վարիչը դուրս տանելու չե:

Ծանօթություն.— Կողմնակի անձինք իրավունք չունեն արխիվի չենքը մտնելու:

### IX

## ԱԲԽՈՎՅՈՅԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐՍԱԿԱՐԱՄԸ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻՒՄ

100. Հիմնարկի արխիվային գործին և, մանավանդ, ներկա կանոնների անթերի կատարմանը վերահսկելու պարտավորությունն պատկանում է հիմնարկի վարչին:

101. Հիմնարկի պետն ամեն տարի վերատուգում և արխիվում սպահվող նյութերի առկայությունն և մատյանների ու ցուցակների կանոնավորությունն:

102. Կենտրոնական Արխիվային Վարչությունն և Շրջանային Արխիվային Բյուրոները պարբերաբար, տարին մեկ անդամ ստուգում են համապատասխան հիմնարկների արխիվները:

103. Կենտրոնարկի և սրա մարմինների կողմից կատարված՝ արխիվների ստուգման նույթերն ու արձանագրությունները կազմվում են Յորինակով, վորից մեկը թողնվում է հիմնարկի արխիվում, յերկրորդը՝ ներկայացվում է հիմնարկի պետին, իսկ յերրորդը՝ մնում է Կենտրոնարկի մարմնի մոտ:

104. Հիմնարկների արխիվներին և արխիվային գործին վերաբերյալ բոլոր հարցերում կենտրոնարկի մարմինները դիմում են հիմնարկների պետերին, կամ սրանց միջոցով՝ արխիվների վարիչներին:

105. ՀՍԽՀ կենտրոնական Արխիվային Վարչությանն ու նրա տեղական մարմիններին իրավունք և վերապահված պատճառարանված առաջարկություններ ներկայացնելու հիմնարկների պե-

## ԳՐԱՆՑՄԱՆ ՔԱՐՏ

աերին կամ նրանց վերադաս վերատեսչական մարմիններին՝ վարչական կարգով գիտապահության պատասխանատվության յինթարկելու սույն կանոնները խախտողներին, նմանագես դիմելու դատախազական հակողության՝ դատական պատասխանատվության յինթարկելու նրանց, վորոնք հանցավոր են արխիվային նյութերի անխնամ պահելու, փչացնելու և վոչնչացնելու մեջ:

1. Հիմնարկի անունը, վորին կից և արխիվը
2. Արխիվի հասցեն
3. Արխիվի կազմակերպման տարին
4. Գիրադաս մարմնի անունը, վորին յինթակա լեռ հիմնարկը
5. Ի՞նչ մտաերից (վարչություններ, բաժանմունքներ, լենթաքաժիններ, սեկտորներ, և այլն) և բաղկացած հիմնարկը, վորին կից և արխիվը
6. Հիմնարկի վար մասերն են հանձնում իրենց նյութերը հիմնարկին կից արխիվին
7. Ի՞նչ վիճակումն և արխիվը
8. Ապահոված և արդյոք արխիվը վտանգներից (հրդեհից, խոնավությունից, վնասատուներից, կորուսաներից, գողություններից և այլն)
9. Արխիվի գետեղաբանը (առանձին շենքում, հատուկ և հնակում, գրասենյակին կից և այլն)
10. Ի՞նչպես են պահվում նյութերը (պահարաններում, դարպակականներում, արկղներում և այլն)
11. Արխիվի վարչի անունը, հայրանունն ու ազգանունը, նաև կրթական ցհնուղը
12. Առևն քարտը կազմելու որը
13. Հիմնարկի պետի ստորագրությունը
14. Արխիվի վարչի ստորագրությունը
15. Ծանօթություն

Զեղ թ 2 (Տես § 9)

(Արտաքին թերթ)

## ԴԻՎԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ ԳՈՐԾԵՐԻ

(Հիմնարկի անունը)

193 ..... թ.

ԳՈՐԾԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

(Հիմնարկի բաժնի կամ մասի անունը)

Սույն ցուցակը պարունակում է .....  
(Տառակով)

Համարակալված թերթեր

(Ներքին թերթեր)

193 ..... թ

Տ Ա Խ	Գործադարձական թերթեր	Թործեր	Թերթերի ընդունութեան թարգմանութեան թերթեր	Մանաթաւություն
	Յ Ե Ր Ա Բ Ա կ ա զ ե լ ո ւ թ ե լ Յ Ե Ր Ա Բ ա ր կ ա լ ո ւ թ ե լ	Պ Ա Ր Ե Ր ա ն ս ւ ն ը	Թ Ե Ր Ի Ւ Ե Ր ը ն դ ա ն ե լ ը	Ժ Ա Մ Ա Ր Ա Կ Ա Լ Վ Ա Ծ Ժ Ա Մ Ա Ր Ա Կ Ա Լ Վ Ա Ծ Ն շ ա ն շ ա ն ն ե ր

Զեղ թ 3 (Տ. § 16)

## ԹԵՐԹԵՐԻ ԳԱՆՑԱԿԻ ՀԱՎԱՍԱԳՐՈՒԹԻՒՄ

Սույն գործը (մատյանը, տետրը և ալին) ըստ 193 ..... թ. ցուցակի

պարունակում է

(Նշել քանակը ատուելով)

համարակալված թերթեր, մեկ լուսանկար ( ..... թերթեց  
հետո), յերկու գծազեր կալկի վրա (մեքենայի մասեր) և ապա-  
գեր բրոցլուրներ ..... (թվանշաններ) թերթերով

193 ..... թ. ..... ամիս ..... ուր

Սարքագրություն

ԳՈՐԾԵՐԻ ՇԱՄԻԿՆԵՐԸ

(Հիմնարկի անունը)

(Բաժնի կամ մասի անունը)

Պահել

(այսքան տարի, կամ մշտապես, կամ անպետք)

№

Համար ըստ տարեկան ցուցակի

193

տարի

Տ Ս Ա

(Գործի անունը)

Ակտած և 193 թ. ամիս. թիվ

Ավարտված և 193 թ. ամիս. թիվ

(Թերթերի քահանկը)

(Մասնթություն հավելվածների և այլ հանդամանքների մասին).

ՆԵՐԻՆ ՑՈՒՑԱԿ

Պահել մ.

193 թ.

թ.

	ԱՆ Ժ Լ Խ Ե	Գ Վ Ի Պ Ի Մ Ա Խ Ե	Յ Ա Ռ Պ Ի Մ Ա Խ Ե	Յ Ա Ռ Ի Բ Ա Խ Ե
Հ Ա Յ Ա Բ Ի Ա Խ Ե	Գ Վ Ի Պ Ի Մ Ա Խ Ե	Յ Ա Ռ Պ Ի Մ Ա Խ Ե	Յ Ա Ռ Ի Բ Ա Խ Ե	Ք Վ Ի Վ Ի Բ Ա Խ Ե

Զեկ № 6 (Տես § 34)

№

ՀԱՆՁՆՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻ

(Հիմնարկի անունը)

(Հիմնարկի բաժինը)

Կազմված ե 193 թ. բազկացած ե թերթից

Հանձնվում ե

(նույն հիմնարկի աշխատվիճ կամ կահարարվածին)

№	Գործի անունը	Գործադրության մասին	Տեղական մարտկած և ամսաթիվ	Սկզբանական թիվ	Մանոթություն

Հանձնեցի

Առաջա

Ամսաթիվ ու տարեթիվ

Զեկ № 7 (Տես § 38)

ՀԻՆՄԱՐԿԻ ԱՆՈՒՆԸ

Կապուկ Ն

(Հիմնարկի բաժինը)

Տարեթիվ

Գործերի Ն Ն 1—53

Զեկ № 8 (Տես § 52)

(Արտաքին թերթը)

ՄԱՏՅԱՆ

ՀԱՆՁՆՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ

Արևիկ

(Հիմնարկի լիակատար անունը)

ՄԱՏՅԱՆ

ՀԱՆՁՆՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

Համարի արխիվ են մտել գործեր և այլ նկութեր՝ սկսած 1921 թ.

Կազմված ե 1921 թ. հունվարի 1-ին.

Մատյանը պարունակում ե

(տառերուկ)

Համարակալված ու ժապավինված թերթեր

(Ներքին թիրթերը)

(Հիմնարկի անունը)

ՀԼ	ՀԼ	Տարի և ամսաթիվը՝ ամփոփում պատց- դամձ գործերի	Հանձնողական ցու- յակի անունը, հաճ- նող հիմնարկի ա- ռաջնորդ և հանձնման տարեթիվը ու ամ- սաթիվը	Հանձնողական ցու- յակի անունը, հաճ- նող հիմնարկի ա- ռաջնորդ և հանձնման տարեթիվը ու ամ- սաթիվը	ՀԼ	ՀԼ	Տարբարական ցու- յակի անունը, հաճ- նող հիմնարկի ա- ռաջնորդ և հանձնման տարեթիվը ու ամ- սաթիվը	Ծանոթություն

Դիզելասական սաստումների հակենարարության սահման

(Ներքին թիրթերը)

Տարբարակ

ՀԼ	ՀԼ	Տեսլի և սահմանը	Սահմանագումած հիմնարկի ա- ռաջնորդ	Պետրովի քահանը	Ուշացից և սահմանը	Ի՞նչ վաս- տագրով և ընդունված	Ծանոթություն

ԶԼ № 10 (Տես § 67 ծանոր.)

ԱՐԽԻՎԻ ՇՏԵՄԳԵԼԸ

Հիմնարկի անունը

Արխիվ

## ԿԱՆՈՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ, ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՌՊԵՐԱԾԻՎ  
ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ԿԼԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԶԵՌՆԱՐԿՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԽԻՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### ՑԱՆԿ ԳԼՈՒԽՆԵՐԻ


Եջ

I.	Ընդհանուր կամոններ . . . . .	3—8
II.	Հիմնարկի արխիվին հանձնելի դիվանական նյու- թերի նախապատրաստումը . . . . .	9—35
	1. Գործերի ավարտը . . . . .	14—15
	2. Գործերի թերթերի համարակալումն . . . . .	16—18
	3. Գրությունների կարելը . . . . .	19—21
	4. Գործերի շաղկեների վերնագիրը . . . . .	22—26
	5. Գործերում պարունակվող վավերագրերի ներ- քին ցուցակը . . . . .	27—28
	6. Դիվանական ցուցակների խմբագրումն և հիմ- նարկներում գործերը պահելու ժամկետները . . . . .	29—32
	6. Հանձնողական ցուցակներ . . . . .	33—35
III.	Գործերի հանձնումը դիվանից հիմնարկի արխիվին	36—44
	1. Հանձնման յենթակա գործերն ու հանձնման ժամկետները . . . . .	36—37
	2. Գործերի հանձնումը հիմնարկի արխիվին . . . . .	38—44
IV.	Նյութերի պահպանումն, տեղափոխումն և հաշվա- ռումը հիմնարկների արխիվներում . . . . .	45—61
	1. Հիմնարկի արխիվի վարչի ընդահնուր պար- տականությունները . . . . .	45
	2. Նյութերի տեղափոխումն . . . . .	46—51
	3. Հանձնողական ցուցակների մասյանը . . . . .	52—58
	4. Հիմնարկի արխիվը մտնող դիվանական նյութերի հաշվառումն . . . . .	59—60

60

V.	Հիմնարկների արխիվների ընթացիկ գործա- վարությունը . . . . .	61
VI.	Արխիվի հիմնարկում պահպող արխիվային նյութե- րից ոգտվելը . . . . .	62—77
	1. Պատճաններ, քաղաքածքներ ու տեղեկանքներ պատրաստելու համար գործերի դուրս տալը արխիվից . . . . .	62—69
	2. Արխիվից վերցված նյութերի վերադարձը . . . . .	70—73
	3. Գրությունների ու վավերագրերի հանույթը . . . . .	74
	4. Նյութերի հանձնումը հիմնարկի արխիվից այլ հիմնարկներին ողտագործման համար . . . . .	75—77
VII.	Գործերի հանձնումը հիմնարկների արխիվից կեն- տրարյուղիմ . . . . .	78—96
	1. Հանձնման յենթակա գործերն ու ժամկետները . . . . .	78—80
	2. Գործերը կենտրարյուղիմն հանձնելու կարգը . . . . .	81—86
	3. Արխիվի ընթացիկ գործերի հանձնումը կեն- տրարյուղիմն . . . . .	87—88
	4. Հանձնվող նյութերի բերելը կենտրարյուղ . . . . .	89—90
VIII.	Արխիվների հանձնման կարգը հիմնարկի լուծարքի կամ արխիվի վարչի փոփոխության դեպքում . . . . .	91—93
IX.	Հիմնարկների արխիվային շենքերը . . . . .	94—99
X.	Արխիվային գործերի վերահսկումն հիմնարկներում	100—105

61



2410

ԱՐԵՎԱԿՈՒՑՔԻՆ՝ Պար. Հակոբյան, Հովհ. Հովհանն

ԹԵՏՐԱԾԻ ՏՊԱՐԱՆ

ԴԼԱՎՈՒՄ № 7898 (Բ) Պատվեր № 2722 Տերած 1200

Համաձնված և արտադրության 10 սեպտեմբերի 1932 թ.  
Ասուրագրված և տպիլու 19 սեպտեմբերի 1932 թ. U. S. Յ. Բ.

Հայաստանի Ազգային գրադարան



NL0427208

18852

ԳԵՐԱ 1 Ռ.